

Հավելված  
Հաստատված է  
Հայաստանի Հանրապետության  
հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի  
2026 թվականի ապրիլի 20-ի  
№ 89-Լ որոշմամբ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Երևան 2026

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԱԽԱԲԱՆ</b> .....	<b>3</b>
<b>1. Օրենսդրական բարեփոխումներ</b> .....	<b>5</b>
<b>2. Էներգետիկայի բնագավառ</b> .....	<b>7</b>
2.1. Հանձնաժողովի իրավական ակտերի բարեփոխումներ .....	7
2.2. Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացում.....	13
2.3. Էլեկտրաէներգետիկական համակարգի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները .....	25
2.4. Գազամատակարարման համակարգի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները .....	26
2.5. Սակագնային քաղաքականություն .....	28
2.6. Լիցենզավորում և լիցենզավորված անձանց միջև կնքված պայմանագրեր .....	39
2.7. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում և գնումների մոնիթորինգ .....	41
2.8. Վերականգնվող էներգետիկա .....	45
<b>3. Ջրային ոլորտ</b> .....	<b>49</b>
3.1. Սակագնային քաղաքականություն .....	49
3.2. Խմելու ջրի սպառման ծավալների մոնիթորինգ և ջրամատակարարման գրաֆիկների հրապարակում .....	52
3.3. Ջրային ոլորտի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները ....	53
<b>4. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ</b> .....	<b>55</b>
4.1. Հանձնաժողովի իրավական ակտերի բարեփոխումներ և նոր կարգավորումներ .....	56
4.2. Ենթակառուցվածքների զարգացում, ընդլայնում, նոր տեխնոլոգիաների ներդրում և ծառայությունների հասանելիության ապահովում.....	58
<b>5. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն</b> .....	<b>93</b>
<b>6. Սպառողների շահերի պաշտպանություն</b> .....	<b>95</b>
6.1. Սպառողների դիմումների քննարկում .....	95
6.2. Սպասարկման որակի ցուցանիշներ .....	102
<b>7. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը</b> .....	<b>109</b>
<b>8. Միջազգային համագործակցություն</b> .....	<b>112</b>
<b>9. Հանձնաժողովի ֆինանսավորում և պետական բյուջեի մուտքեր</b> .....	<b>117</b>

## ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) պետական քաղաքականություն իրականացնող ինքնավար մարմին է, որն օրենքներով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում կարգավորում է էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառները և ջրային ոլորտը:

Հանձնաժողովը 2025 թվականին գործել է հետևյալ կազմով.

Մեսրոպ Մեսրոպյան՝ հանձնաժողովի նախագահ,

Սերգեյ Աղինյան՝ հանձնաժողովի անդամ,

Սեդա Շահինյան՝ հանձնաժողովի անդամ,

Կամո Սարգսյան՝ հանձնաժողովի անդամ,

Արա Նռանյան՝ հանձնաժողովի անդամ:

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- 1) Սակագնային քաղաքականության վարչություն,
- 2) Իրավաբանական և լիցենզավորման վարչություն,
- 3) Հեռահաղորդակցության վարչություն,
- 4) Ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչություն,
- 5) Գործերի կառավարման վարչություն,
- 6) Անձնակազմի կառավարման բաժին,
- 7) Հաշվապահական հաշվառման և սոցիալական ծրագրերի իրականացման բաժին,
- 8) Միջազգային համագործակցության բաժին:

Հանձնաժողովի բնականոն աշխատանքը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի համաձայն, համակարգում և ապահովում է հանձնաժողովի նախագահը, իսկ հանձնաժողովի կառուցվածքային

ստորաբաժանումների աշխատանքը՝ օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասությունների շրջանակում, հանձնաժողովի անդամները և գլխավոր քարտուղարը:

# 1. Օրենսդրական բարեփոխումներ

Հանձնաժողովի առաջնահերթ խնդիրներից է կարգավորման դաշտի բազմակողմանի ճկուն կանոնակարգումն ու դրա շարունակական կատարելագործման ապահովումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման ու կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից:



Սահմանադրաիրավական պահանջին, միջազգային փորձին և Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԳՀՄ/CEPA) շրջանակում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած հանձնառություններին համահունչ, հանձնաժողովի ինստիտուցիոնալ կայացմանն ուղղված հաջորդ շրջափուլին ընդառաջ՝ հանձնաժողովը 2025 թվականին մասնակցել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Հայաստանի էներգետիկ անվտանգության ծրագրի և Համաշխարհային բանկի աջակցությամբ մշակված «Էլեկտրաէներգետիկայի մասին» նոր օրենքի նախագծի և օրենքի նախագծից բխող այլ օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերի, այդ թվում՝ ««Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակման աշխատանքներին: Նշված օրինագծերի փաթեթով նախատեսվում է հանձնաժողովի ֆինանսական անկախության ապահովմանն ուղղված՝ վերջինիս ֆինանսավորման բանաձևի վերանայում՝ սահմանելով

Ֆինանսավորման միջազգային լավագույն փորձին և Եվրոպական միության օրենսդրությամբ սահմանված սկզբունքներին համահունչ պարտադիր վճարների, հանձնաժողովի անդամների՝ մրցութային խորհրդի կողմից ընտրության մեխանիզմների ներդրում, սպառողների շահերի պաշտպանի ինստիտուտի ստեղծում, հանձնաժողովում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անհրաժեշտ քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի՝ կրթության, աշխատանքային ստաժի և այլ չափանիշների, ինչպես նաև հանձնաժողովի կողմից իր սահմանած կարգով և դեպքերում վճարովի հիմունքներով փորձագետի ներգրավման հնարավորություն:

2025 թվականին հանձնաժողովի քննարկմանն են ներկայացվել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Հայաստանի էներգետիկ անվտանգության ծրագրի և Համաշխարհային բանկի կողմից մշակված «Էլեկտրաէներգետիկայի մասին» և «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության մասին» նոր օրենքների լրամշակված նախագծերը, որոնց ընդունումը՝ Եվրոպայի միության դիրեկտիվների պահանջների հաշվառմամբ, սկիզբ կհանդիսանա էներգետիկայի բնագավառում բարեփոխումների երկրորդ փուլի համար: Բարեփոխումների այդ փուլի ընթացքում կդիտարկվեն լիարժեք մրցակցային շուկայի ձևավորման հնարավորությունները:

«Էլեկտրաէներգետիկայի մասին» և «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության մասին» օրենքների նախագծերով, մասնավորապես, նախատեսվում են հաղորդման և բաշխման ցանցի օպերատորների գործառութային շահերի բախման կանխարգելման տարանջատումն ու կարգավորումը, հանձնաժողովի իրավասությունների հստակեցում՝ ինստիտուցիոնալ անկախության հաշվառմամբ, ինչպես նաև հանձնաժողովի բացառիկության ապահովում, հաշվեկշռման ծառայությունը մրցակցային կարգով մատուցելու համար օրենսդրական հիմքերի ամրագրում, հաղորդման ցանցի օպերատորին և բաշխման ցանցի օպերատորին պահեստավորող կայանների կառուցումը, տնօրինումը, շահագործումը թույլատրելու հնարավորության տրամադրում, մեծածախ շուկայում նոր՝ «օրական շուկա» հատվածի ավելացում, բացի երաշխավորված մատակարարման ծառայությունից՝ նաև ժամանակավոր մատակարարման ծառայություն իրականացնելու հնարավորության սահմանում, օրենքի մակարդակով էլեկտրական էներգիայի մրցակցային

մատակարարման վերաբերյալ իրավակարգավորումների ամրագրում և այլն: Նշված նախագծերի լրամշակման աշխատանքները շարունակվում են:

## **2. Էներգետիկայի բնագավառ**

### ***2.1. Հանձնաժողովի իրավական ակտերի բարեփոխումներ***

Հանձնաժողովը 2025 թվականին ևս շարունակել է հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործառույթների շրջանակում իր իրավական ակտերի բարեփոխումները:

Մասնավորապես, հաշվետու տարում լրամշակվել են՝

- 1) Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի (ԷՄՇ) առևտրային կանոնները, որով, ի թիվս այլնի՝
  - ներդրվել է էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի կողմից առանց արտառոց իրավիճակ հայտարարելու սակագնային կարգավորման ենթակա կայաններին և պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերի շրջանակում գործող արտադրողներին կարգավարման գործընթացում ներգրավելու հետ կապված կարգավորումը.
  - վերանայվել է ուղիղ պայմանագրերի շուկայի կարգավորվող բաղադրիչում էլեկտրական էներգիայի գնման հայտ ներկայացնելիս էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրի մասնակցի բանկային երաշխիքի հասանելի մնացորդի նվազեցման մեխանիզմը.
  - ապահովվել է սակագնային կարգավորման ենթակա կայանների՝ օր առաջ շուկայի (ՕԱՇ) բաղադրիչում անխոչընդոտ մասնակցությունը, ինչպես նաև համակարգում լրացուցիչ ծախսեր չառաջացնելու նպատակով՝ կանոնակարգվել է ՕԱՇ-ում այդ կայանների կողմից տնօրինելի հզորությունը գերազանցող մասով հայտեր չներկայացնելու գործընթացը.
  - ապահովվել է առանց հաշվառքի սարքերի ենթասպառող ունեցող սպառողների և պետական բյուջեից սուբսիդիա ստացող ընկերությունների՝ անխոչընդոտ և առանց ֆինանսական լրացուցիչ պարտավորությունների մուտքն էլեկտրաէներգետիկական ազատականացված շուկա:

- 2) Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի (ԷՄԱ) առևտրային կանոնները, որով, ի թիվս այլնի՝
- էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ազատականացման բարեփոխման շարունակականությունն ապահովելու նպատակով նախատեսվել է ըստ սպառողների սպառման ծավալի, անկախ վերջիններիս լարման մակարդակից, 2027 թվականի փետրվարի 1-ից մինչև 2030 թվականի փետրվարի 1-ն ըստ տարիների՝ որակավորված սպառողի կարգավիճակ ստանալու կամ մատակարար ընտրելու ժամանակացույց.
  - նախատեսվել են համապատասխան կարգավորումներ նախորդ օրացուցային տարվա ընթացքում իրենց 6 (10) կՎ ու բարձր լարման՝ մեկ միլիոն կՎտժ սպառումը գերազանցող բոլոր հաշվառման կետերում միասին 12 միլիոն կՎտժ-ից ավելի սպառում ունեցող սպառողների՝ որակավորված սպառողի կարգավիճակ ստանալու մասով:
- 3) Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման ցանցային (ԷՀՑ) կանոնները, որով, ի թիվս այլնի, հստակեցվել են էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների խախտման կամ դրա վտանգի դեպքում էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի կողմից սահմանափակման ենթակա արտադրողին էլեկտրական էներգիայի՝ էլեկտրական ցանց առաքումը դադարեցնելու կամ սահմանափակելու վերաբերյալ կարգավարական կարգադրության իրավակարգավորումները:
- 4) Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային (ԷԲՑ) կանոնները, որով, ի թիվս այլնի, սահմանվել են որակավորված սպառողի կարգավիճակ ստանալու կամ մատակարար ընտրելու պարտավորություն ունեցող սպառողների դիմելու դեպքում բաշխողի կողմից առևտրային հաշվառքի սարքի փոխարինման և հաշվառման քարտում համապատասխան փոփոխություն կատարելու համար հստակեցված ժամկետները:
- 5) էլեկտրաէներգետիկական համակարգում սակագների հաշվարկման մեթոդիկան, որի համաձայն՝

- ԷՄՇ կանոններով սահմանված սակագնային կարգավորման ենթակա (ԿԷԱ) կայանների փաստացի գործունեությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ հասույթի շեղման արդյունքում ձևավորված փոխհատուցման ենթակա դեֆիցիտի կամ վերադարձման ենթակա լրացուցիչ հասույթի հաշվարկներում հաշվի կառնվի միայն ԷՄՇ կանոնների համաձայն՝ պատասխանատվության ՀՊԿԼ կարգավիճակում գտնվելու ժամանակահատվածում պատրաստական վիճակում չգտնվելու հետևանքով պակաս առաքված էլեկտրական էներգիայի քանակը, ինչպես նաև էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի կողմից առանց վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակի հայտարարման կարգավարման գործընթացում գտնվելու ժամանակահատվածում ԷՄՇ-ում զրոյական գնով ձեռքբերված և իրենց սակագնով վաճառված էլեկտրական էներգիայի քանակը,
- ԿԷԱ կայանների տիրապետմանը կթողնվի հանձնաժողովի հաստատած սակագնից ավելի բարձր գնով էլեկտրական էներգիայի վաճառքից ստացած լրացուցիչ եկամտի և ԷՄՇ-ում առաջացրած անհաշվեկշռայթների արդյունքում ձևավորված լրացուցիչ ծախսի դրական տարբերության (լրացուցիչ օգուտի) 75 տոկոսը՝ նախկինում գործող 85 տոկոսի փոխարեն, ինչպես նաև կփոխհատուցվի բացասական տարբերությամբ պայմանավորված լրացուցիչ ծախսի 75 տոկոսը,
- անկանխատեսելի հանգամանքներով պայմանավորված զգալի ֆինանսական կորուստներ կրելու ռիսկերը մեղմելու նպատակով՝ ԿԷԱ կայաններին կփոխհատուցվի հաշվեկշռման պատասխանատվության ինքնուրույն կարգավիճակում գտնվելու ժամանակահատվածում վթարային կանգի կամ տնօրինելի հզորության չապահովման պատճառով ԷՄՇ ուղիղ պայմանագրերի շուկայի կարգավորվող բաղադրիչում մասնակցության արդյունքում առաջացած լրացուցիչ ծախսի 75 տոկոսը, բայց ոչ ավելի՝ 12 ամիսների ընթացքում ԿԷԱ կայանից առաքված էլեկտրական էներգիայի քանակի 5 տոկոսին համարժեք ծախսը,
- ջրային ռեսուրսի կիրառմամբ գործող ԿԷԱ կայանի համար ԷՄՇ կանոններով նախատեսված հաշվեկշռման պատասխանատվության ինքնուրույն կարգավիճակում գտնվելու և գարնանային վարարումների հետ համընկնող

ժամանակահատվածում (մարտ ամիս) ավել արտադրված էլեկտրական էներգիայի փաստացի արժեքի որոշման ժամանակ սակագինը կրնդունվի տվյալ ժամանակահատվածի համար գործող հաշվեկշռման ծառայության մատուցման նվազագույն սակագնին հավասար՝ միաժամանակ, տվյալ ամսվա համար հանձնաժողովի հաստատած սակագնից ավելի բարձր գնով էլեկտրական էներգիայի վաճառքը կատարելով հաշվեկշռման ծառայության նվազագույն սակագնի համեմատությամբ,

- հաշվեկշռման ծառայության մատուցման առավելագույն սակագինը կրնդունվի հաշվեկշռման ծառայություն մատուցող արտադրողի այն սակագնին հավասար, որը կհաշվարկվի վերջինիս անհրաժեշտ հասույթի մեծության (ներառյալ՝ ՀԷԱ կայաններից իր գնից թանկ գնով ձեռքբերվող էլեկտրական էներգիայի ծախսը, առաքվող էլեկտրական էներգիայի համար անհրաժեշտ՝ սպառողների համար սահմանված բնական գազի սակագնով ձևավորվող վառելիքի ծախսը) և առաքվող էլեկտրական էներգիայի քանակից ելնելով, և կիրառության մեջ կդրվի 2027 թվականի փետրվարի 1-ից սկսվող սակագնային տարվա համար,
  - նախատեսվել է երաշխավորված մատակարարի կողմից հանձնաժողովի սահմանած մեծություններին համապատասխան ավելցուկային հզորությունը հաշվեկշռման ծառայություն մատուցողին վաճառելու հնարավորություն, որը կիրառության մեջ կդրվի 2027 թվականի փետրվարի 1-ից սկսվող սակագնային տարվա համար:
- 6) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի N374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, որի շրջանակում, ««էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2025 թվականի մայիսի 14-ի N«ՀՕ-111-Ն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ նշված կարգով ամրագրված իրավակարգավորումների հստակեցման, արդիականացման, հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում կիրառվող ընթացակարգերի համանմանությունն ապահովելու, ինչպես նաև տարընկալումներից խուսափելու նպատակով՝
- վերանայվել են էլեկտրական էներգիայի բաշխման կամ հաղորդման

լիցենզիա ունեցող անձից էլեկտրական ցանցին պահանջվող հզորությամբ միանալու տեղեկանքի ներկայացման դեպքերը, քանի որ այն սպառողները, որոնց կողմից կառուցվող (կառուցված) կայանները նախատեսվում են միացնել սպառման համակարգի միջոցով և, կայանի հայցվող հզորությունը չի գերազանցում տվյալ սպառման համակարգի առավելագույն հզորությունը՝ այլևս լիցենզավորման համար չեն ներկայացնի վերոնշյալ փաստաթուղթը.

- սահմանվել է 2026 թվականի փետրվարի 1-ից օրենքով սահմանված էլեկտրաէներգիայի գնման երաշխիքից օգտվող՝ բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններում, արևային և հողմային կայաններում էլեկտրական էներգիա արտադրողների կողմից 2026 թվականի փետրվարի 1-ից մինչև 2028 թվականի փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրական էներգիայի գնման երաշխիքից հրաժարվելու (առանց տվյալ երաշխիքի վերականգնման իրավունքի) և մրցակցային շուկա մուտք գործելու ընթացակարգը.
- լիցենզավորման կարգում սահմանափակման ենթակա արտադրողների վերաբերյալ առկա իրավակարգավորումների մասով՝ հետագայում իրավական ակտերի կրկնակի փոփոխություններից խուսափելու նպատակով, կոնկրետ այդ կայանների տեսակները թվարկելու փախարեն հղում է արվել Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի ցանցային կանոններին, իսկ որոշակի դեպքերում՝ լիցենզավորման կարգով ևս ամրագրվել է տվյալ տեսակի արտադրողների համար կայանը հեռակառավարման սարքավորման միջոցով էլեկտրական ցանցից անջատման հնարավորությամբ ապահովված լինելու պահանջը.
- գործող ընթացակարգի պարզեցման և իրավական որոշակիության ապահովման նպատակով՝ վերանայվել են կայանի նկատմամբ լիցենզավորված անձի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի (վկայականների) պատճենի (պատճենների) ներկայացման դեպքերը. մասնավորապես, նախատեսվող փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո՝ օրենսդրությամբ սահմանված դեպքերում կայանի կառուցման համար նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կամ շինարարության

թույլտվություն չպահանջվելու դեպքերում՝ տվյալ փաստաթղթի ներկայացման անհրաժեշտությունը չի առաջանա.

- տարընկալումներից խուսափելու նպատակով՝ կարգում կատարվել են նաև խմբագրական բնույթի որոշ այլ փոփոխություններ, այդ թվում՝ երաշխիքով սահմանված գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու գործընթացի մասով:
- 7) Էներգետիկայի բնագավառում լիցենզիա ունեցող անձի բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման, ինչպես նաև լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման համաձայնեցման կարգը: Մասնավորապես, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածով ամրագրված դրույթներին համապատասխանեցնելու նպատակով՝ կարգում կատարվել են որոշ լրացումներ, որոնցով նախատեսվել է լիցենզավորված անձանց կողմից, ի թիվս այլ փաստաթղթերի, հանձնաժողով ներկայացնել նաև բաժնեմաս (գույք) օտարող, այլ կերպ փոխանցող կամ գրավադրող անձի կողմից «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված նախապատվության իրավունքի իրականացման կարգը պահպանած լինելը հավաստող փաստաթղթերը, իսկ նշված նախապատվության իրավունքի իրականացման կարգը չպահպանելու դեպքում՝ նախատեսվել է հանձնաժողովի կողմից գործարքի կնքմանը համաձայնություն չտալու պահանջ:
- 8) Գազամատակարարման համակարգում կարգավորվող սակագների հաշվարկման մեթոդիկան, որով, հաշվի առնելով կարգավորման առաջին ժամանակահատվածում առաջացած խնդիրները և նպատակ ունենալով հստակեցնել խթանիչ սակագնային քաղաքականության դրույթները՝ նախատեսվել են՝
- բաշխիչ ցանցի աշխատողների թվաքանակի թիրախային մեծությունների կրճատման հետ մեկտեղ, դրանց ճշգրտում նաև բաշխիչ ցանցի երկարության՝ նախատեսվածից ավելի աճով կամ նվազմամբ պայմանավորված,

- գումարների հավաքագրման թիրախային մեծությունների կրճատման հետ մեկտեղ՝ դրանց ճշգրտում նաև բնակչության սպառման ծավալների աճով կամ նվազմամբ պայմանավորված,
  - արագամաշ առարկաների գծով ծախսի դիտարկում՝ նյութական ծախսերում:
- 9) Հանրային կազմակերպությունների գնումների նկատմամբ պահանջները, որով, ի թիվս այլնի՝
- սահմանվել են դրույթներ հանրային կազմակերպությունների մրցութային գործընթացները 2026 թվականի սեպտեմբերի 1-ից բացառապես էլեկտրոնային եղանակով՝ համաշխարհային ճանաչում ունեցող հարթակների, կամ պետական գնումների համար օգտագործվող «armeps» հարթակի միջոցով կազմակերպելու վերաբերյալ, որն էլ ավելի կբարձրացնի հանրային կազմակերպությունների մրցույթների թափանցիկության և անաչառության մակարդակը, իսկ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների համակարգերն ընտրելու դեպքում՝ կմեծացնի նաև մրցույթների մասնակիցների աշխարհագրությունը.
  - ավելացվել են հանրային կազմակերպությունների շրջանակն ընդլայնող դրույթներ՝ ներառելով նաև հանձնաժողովի հաստատած ցանկում ընդգրկված հանրային ծառայությունների կարգավորվող ընկերության հետ փոխկապակցված կազմակերպություններին.
  - սահմանվել են դրույթներ, որոնց համաձայն՝ հանրային կազմակերպությունները իրավունք չունեն իրենց փոխկապակցված կազմակերպություններից կատարելու գնումներ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ փոխկապակցված կազմակերպությունը ևս ներառվում է հանձնաժողովի ցանկում, ենթարկվում պահանջներին, որի պարագայում՝ գնումը կարող է իրականացվել նաև մեկ անձի ընթացակարգով:

## **2.2. Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացում**

2022 թվականի փետրվարի 1-ից ներդրված էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման ռեֆորմը կարելի է ամենաարմատականը համարել 2004 թվականին ոլորտում իրականացված բարեփոխումներից ի վեր: Բարեփոխումների շրջանակում «Էներգետիկայի մասին» օրենքից բխող հսկայածավալ և բազմապրոֆիլ աշխատանքների արդյունքում բոլոր շահագրգիռ կառույցների հետ համատեղ մշակվել


և ընդունվել են շուկայի ներկայիս մոդելի հիմքում ընկած հիմնական կարգավորող իրավական ակտերը՝ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնները և պայմանագրերը, էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնները և պայմանագրերը, հաղորդման ցանցային կանոնները, բաշխման ցանցային կանոնները: 2025 թվականին հանձնաժողովի կողմից մշակվել և ընդունվել են նշված կանոնների լավարկմանն ուղղված փոփոխությունների ավելի քան 5 ծավալուն փաթեթներ:

Ռեֆորմի հիմքում ընկած կոնցեպտուալ տարրերն են՝

- էլեկտաէներգետիկական համակարգում մենաշնորհի՝ մրցակցությամբ փոխարինումը (դեմոնոպոլիզացիա).
- ընտրության հնարավորություն սպառողների համար՝ մրցակցային մատակարարների ընտրության (մանրածախ շուկա) կամ որպես որակավորված սպառողներ՝ անմիջապես մեծածախ շուկային մասնակցության միջոցով.
- մրցակցային մասնակիցների մուտք էլեկտրաէներգետիկական շուկա.
- առևտրի թվայնացում և ամսական առևտրի փոխարինում ժամային առևտրով՝ շուկայի էլեկտրոնային ծրագրի միջոցով.
- ներդրումների խթանում՝ առավելապես արևային էներգետիկայի բնագավառում.
- հասցեական պատասխանատվություն և պլանավորման լավարկում.
- միջսահմանային առևտրի խթանում՝ էլեկտրական էներգիայի ներկրման և արտահանման պարզեցված կարգավորումների ներդրմամբ.
- մեծածախ առևտրի իրականացում շուկայի 3 բաղադրիչում՝ ուղիղ պայմանագրերի շուկա, օր առաջ շուկա, հաշվեկշռման շուկա.
- անցումային կարգավորումներ՝ ռեֆորմի հարթ և անցնցում իրականացման նպատակով:




արդյունքներով շուկայի ազատականացված հատվածի սպառումը կազմում էր ներքին սպառման շուրջ 5.3 տոկոսը, 2023 թվականի արդյունքներով՝ 20.1 տոկոսը, 2024 թվականի արդյունքներով 27.8 տոկոսը, ապա 2025 թվականի արդյունքներով այն արդեն կազմել է 33.2 տոկոս:




2026 թվականի փետրվարի 1-ից նախատեսվում էր շուրջ 212 նոր սպառողների մուտքն ազատական շուկա՝ տարեկան ընդհանուր շուրջ 360 մլն կՎտժ սպառման ծավալով, սակայն բաշխողի կողմից մեծաքանակ հաշվիչների փոխարինման գործընթացի, ինչպես նաև նշված հաշվիչների՝ շուկայի կառավարման ծրագրում մուտքագրման աշխատանքների առավել արդյունավետ և օպտիմալ իրականացման նպատակով՝ 2026 թվականի փետրվարի 1-ից մեկական տարով հետաձգվել են մրցակցային շուկա սպառողների համար սահմանված պարտադիր մուտքի ժամկետները: Արդյունքում, 2026 թվականին մրցակցային շուկայում սպառված էլեկտրական էներգիայի մասնաբաժինը կմնա անփոփոխ, իսկ 2027 թվականի համար՝ կանխատեսվում է 38 տոկոս:

## Շուկայի ազատականացված հատվածի սպառում




2022 թվականի փետրվարի 1-ից էլեկտրաէներգետիկական համակարգի բոլոր սպառողներին տրված է ընտրության իրավունք՝ ինքնուրույն որոշելու սեփական մատակարարին. այլ կերպ ասած՝ սպառողն ինքն է որոշում շարունակել իրեն անհրաժեշտ էլեկտրական էներգիան գնել պատմականորեն մենաշնորհ ունեցող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունից՝ հանձնաժողովի կողմից սահմանված սակագներով, թե ընտրել մրցակցային այլ մատակարարի և վճարել չկարգավորվող պայմանագրային գնով: Ընդ որում, մրցակցային մատակարարի ընտրության դեպքում ևս «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավոր է տեղափոխել մրցակցային եղանակով գնված էլեկտրական էներգիան՝ դրա դիմաց վճարվելով միայն հանձնաժողովի սահմանած էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության սակագներով: Կոմերցիոն սպառողներին իրավունք է տրված անմիջականորեն մասնակցելու մեծածախ շուկային, ինչն իր հերթին, նշանակում է էլեկտրական էներգիայի գնում անմիջապես արտադրողից կամ մեծածախ առևտուր իրականացնողից (թրեյդերից):

## Ազատականացված շուկայի սպառումն ըստ շուկայի մասնակիցների



Շուկայի ազատականացումն ապահովել է նաև նոր՝ մրցակցային մասնակիցների մուտքն էլեկտրաէներգետիկական համակարգ: 2025 թվականի արդյունքներով շուկայի մրցակցային հատվածում գործունեության լիցենզիա են ունեցել 32 մատակարար, որոնցից 12-ն ակտիվ գործունեություն են իրականացրել շուկայում, 9 մեծածախ առևտուր իրականացնող անձ (թրեյդեր), 216 մրցակցային էլեկտրակայաններ (այդ թվում՝ միկրոէներգաարտադրողներ), բացի այդ՝ գործել են նաև 45 որակավորված սպառողներ:

**Նոր մասնակիցների մուտքը շուկա, 31.12.2025թ. դրությամբ**




2025 թվականի մայիսի 14-ին ընդունված «Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-111-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն՝ նախորդ օրացուցային տարվա ընթացքում իրենց 6 (10) կՎ ու բարձր լարման՝ մեկ միլիոն կՎտժ սպառումը գերազանցող բոլոր հաշվառման կետերում միասին 12 միլիոն կՎտժ և ավելի սպառում ունեցող սպառողները պարտավոր են եղել մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը տվյալ հաշվառման կետերի մասով ստանալ որակավորված սպառողի կարգավիճակ: 2024 թվականի տարեկան սպառման արդյունքներով առկա էր հիշյալ օրենքի ուժով որակավորված սպառողի կարգավիճակ ստանալու պարտավորություն ունեցող 23 սպառող, ընդամենը՝ 1557 մլն կՎտժ տարեկան սպառման ծավալով, որոնցից 7-ն արդեն իսկ շուկայում գործող որակավորված սպառողներ էին, մյուս 16-ը՝ մատակարարների հաշվեկշռման խմբերում գործող սպառողներ: Վերջիններս 2025 թվականի օգոստոսի 1-ից շուկայում գործում են որպես որակավորված սպառողներ:

Էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդելը ենթադրում է անցում ամբողջությամբ թվայնացված առևտրի, որի շրջանակում ամսական առևտուրը փոխարինվել է իրական ժամանակում ընթացող ժամային առևտրով և, որտեղ առևտուրն իրականացվում է միասնական էլեկտրոնային հարթակի՝ շուկայի կառավարման ծրագրի միջոցով:

Շուկայի ազատականացումը կողմնորոշիչ ազդակ է ոլորտում հետագա ներդրումների, այդ թվում՝ օտարերկրյա, խթանման ու ներգրավման համար: Պետության կողմից տրամադրվող երաշխիքից հրաժարվելու և ամբողջությամբ

մրցակցային տիրույթում գործելու պայմանով 2025 թվականի արդյունքներով հանձնաժողովի կողմից լիցենզավորվել են 21 տնտեսվարողներ (արևային կայաններ), որոնց ներդրումն էլեկտրաէներգետիկական համակարգում կազմելու է շուրջ 14 միլիարդ դրամ:




2026 թվականին շուկայում ներկայումս գործող 216 մրցակցային էլեկտրակայաններին (ներառյալ միկրոէներգաարտադրողներ) կավելանան նաև «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված էլեկտրական էներգիայի գնման երաշխիքային ժամկետը լրացած ևս 11 փոքր հիդրոէլեկտրակայաններ: Միաժամանակ, Օրենքի համաձայն՝ էլեկտրական էներգիայի գնման երաշխիքից օգտվող լիցենզավորված անձինք, բացառությամբ խմելու կամ ոռոգման ջրատարի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայան շահագործող անձանց՝ այդ կայանի մասով, իրավունք ունեն հանձնաժողովի կողմից սահմանված կարգով 2026 թվականի փետրվարի 1-ից սկսած մինչև 2028 թվականի փետրվարի 1-ը հրաժարվելու էլեկտրական էներգիայի գնման երաշխիքից, որից հետագայում այլևս օգտվել չեն կարող: Այս կարգավորման ներդրման արդյունքում ազատական շուկայում գործող մրցակցային կայանների թիվը նույնպես կաճի:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2025 թվականին ընդունված «Էներգետիկայի մասին» օրենքում լրացումների և


փոփոխությունների արդյունքում 150 կՎտ-ից մինչև 500 կՎտ գերազանցող հզորությամբ ինքնավար էներգաարտադրողների համար հնարավորություն է ստեղծվել նույն կարգավիճակն ունեցող մյուս անձանց հետ հավասար պայմաններով մասնակցելու էլեկտրաէներգետիկական մրցակցային շուկային՝ այդ կերպ նաև խթանելով էլեկտրաէներգետիկական շուկայում մրցակցությունը և ընդլայնելով դրա մրցակցային հատվածում առևտրի մասնակիցների շրջանակը:

Մեծածախ շուկայում առևտուրը ենթադրում է օպտիմալ պլանավորում և հասցեական պատասխանատվություն՝ ինչպես սպառման, այնպես էլ արտադրության հատվածում: Շուկայի նոր մոդելի շրջանակում ամսական առևտուրը փոխարինվել է ժամային առևտրով, ինչի արդյունքում՝ շուկայում գործող յուրաքանչյուր առևտրի մասնակից պատասխանատվություն է կրում տվյալ ժամի համար իր գնած կամ վաճառած հոսանքի ծավալից շեղվելու համար:



Շուկայի ազատականացումը և էլեկտրական էներգիայի ներկրման ու արտահանման պարզեցված կարգավորումների ներդրումը կարևոր ազդակ են միջսահմանային առևտրի խթանման համար: Շուկայի մեկնարկից ի վեր, Վրաստանից ներկրվել է շուրջ 370 միլիոն կՎտժ, իսկ արտահանվել՝ շուրջ 756 միլիոն կՎտժ էլեկտրական էներգիա: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ միջսահմանային առևտրի ներուժը հնարավոր կլինի ամբողջությամբ օգտագործել Հայաստան-Վրաստան միջպետական նոր բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի գործարկման արդյունքում:

## Վրաստանից ներկրված և Վրաստան արտահանված էլեկտրական էներգիա




Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում առևտուրն իրականացվում է հետևյալ սեգմենտներում՝

- ուղիղ պայմանագրերի շուկայում, որն իր հերթին բաղկացած է երկարաժամկետ (ԵՐՊ), կարգավորվող (ԿՈՒՊ) և չկարգավորվող (ՉՈՒՊ) ուղիղ պայմանագրերի բաղադրիչներից: Ընդ որում, կարգավորվող ուղիղ պայմանագրերի բաղադրիչը գործարկվել է 2023 թվականի փետրվարի 1-ից:
- օր-առաջ շուկայում (ՕԱՇ):
- հաշվեկշռման շուկայում՝ սահմանված մեխանիզմով (հաշվեկշռման ծառայություն մատուցողի՝ ՀԾՄ-ի կողմից):

Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի գործարկումից ի վեր՝ 2025 թվականի տարեվերջի դրությամբ կնքվել են շուրջ 138317 պայմանագրեր, որոնցից 21-ը՝ երկարաժամկետ պայմանագրերի բաղադրիչում, 1582-ը՝ կարգավորվող ուղիղ պայմանագրերի բաղադրիչում, 847-ը՝ տեղական և 30-ը՝ միջպետական չկարգավորվող ուղիղ պայմանագրերի բաղադրիչում, 135837-ը՝ օր-առաջ շուկայում: Ընդ որում, 2025 թվականի ընթացքում կնքվել են 111002 պայմանագրեր, որոնցից 3-ը՝ երկարաժամկետ պայմանագրերի բաղադրիչում, 885-ը կարգավորվող ուղիղ պայմանագրերի բաղադրիչում, 633-ը՝ տեղական և 6-ը՝ միջպետական չկարգավորվող ուղիղ պայմանագրերի բաղադրիչում, 109475-ը՝ օր-առաջ շուկայում:

2022-2025թթ. և 2025 թվականի ընթացքում շուկայում կնքված գործարքներ




Շուկայի ազատականացման բարեփոխումը հնարավորինս հարթ և անցնցում իրականացնելու նպատակով, ինչպես նաև ելնելով էլեկտրաէներգետիկական համակարգի բարեփոխումների հիմքում դրված՝ ներքին շուկայի սպառողների շահերի պաշտպանության հիմնարար սկզբունքից՝ շուկայի մեկնարկի սկզբնական շրջափուլի համար հանձնաժողովը սահմանել է անցումային կարգավորումներ: Նշված կարգավորումները շուկայի մասնակիցներին թույլ են տալիս իրենց վարքագիծը համապատասխանեցնել շուկայական նոր մոդելին աստիճանաբար՝ մի կողմից օգտվելով շուկայի ընձեռած հնարավորություններից, մյուս կողմից՝ զերծ մնալ կտրուկ ֆինանսական տատանումներից: Նշված կարգավորումների շրջանակում՝

- շուկայի մեկնարկի առաջին տարվա համար սպառողների մուտքը կրել է կամավոր բնույթ.
- կարգավորվող ուղիղ պայմանագրերի շուկան գործարկվել է 2023 թվականի փետրվարի 1-ից.
- սպառողների համար սահմանվել են շուկա պարտադիր մուտքի աստիճանական ժամկետներ՝ պայմանավորված վերջիններիս լարման մակարդակով և տարեկան սպառմամբ:

Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N°517-Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնների

107-րդ կետի համաձայն, 2025 թվականին՝ այն սպառողները, որոնք նախորդ օրացուցային տարում իրենց 6(10) կՎ առևտրային հաշվառքի սարքով ունեցել են 1 միլիոն կՎտժ և ավելի սպառում, պարտադիր պետք է մուտք գործեն էլեկտրաէներգետիկական ազատական շուկա մինչև 2025 թվականի փետրվարի 1-ը, իսկ այն սպառողները, որոնք նախորդ օրացուցային տարում իրենց 6(10) կՎ լարման բոլոր՝ 12 հազար կՎտժ սպառումը գերազանցող առևտրային հաշվառքի սարքերով ունեցել են 1 մլն կՎտժ և ավելի սպառում՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը:

2025 թվականի ընթացքում 6(10) կՎ լարման սպառողները՝ շուրջ 474,5 միլիոն կՎտժ սպառման ծավալով, մուտք են գործել ազատական շուկա:



Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման համատեքստում հանձնաժողովին վերապահված գործառույթներին լրացվել է, ըստ էության, ամբողջովին նոր ինստիտուցիոնալ գործառույթ՝ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մոնիթորինգ: Հանձնաժողովի կողմից իրականացվող մոնիթորինգի

արդյունավետ կիրառումից է մեծապես կախված շուկայի բնականոն աշխատանքը, վերջնարդյունքում՝ նաև ազատականացման ռեֆորմի աստիճանական և անցնցում իրագործման հաջողումը: Հանձնաժողովին վերապահված հիշյալ գործառույթի շրջանակում 2025 թվականի ընթացքում հանձնաժողովի աշխատակազմի կողմից դիտարկվել է շուկայի գործունեությունը և դրա շրջանակում կնքվող գործարքների՝ շուկայի կանոններին համապատասխանությունը, բացահայտվել են շուկայի մասնակիցների կողմից թույլ տրված բացթողումները, հասցեական գնահատականներ են տրվել դրանց, օպերատիվ կերպով լուծումներ են առաջադրվել առևտրի ընթացքում ծագող օբյեկտիվ խնդիրներին, որոնք հիմք են հանդիսացել նաև շուկայի ներկայիս մոդելի հիմքում ընկած հիմնական կարգավորող իրավական ակտերի (էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկայի առևտրային կանոններ, օֆերտայի պայմանագրի օրինակելի ձև, հաղորդման և բաշխման ցանցային կանոններ) լրամշակումների համար:

### **2.3. Էլեկտրաէներգետիկական համակարգի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները**

Արտադրող կայաններից էլեկտրական էներգիայի օգտակար առաքումը 2025 թվականին կազմել է 9348.4 միլիոն կՎտժ՝ 2024 թվականի համեմատությամբ աճելով 524.4 միլիոն կՎտժ-ով կամ 5.9 տոկոսով: Միաժամանակ, 2025 թվականին ներկրվել է 63 միլիոն կՎտժ էլեկտրական էներգիա՝ նախորդ տարվա համեմատությամբ նվազելով 81.9 միլիոն կՎտժ-ով կամ 56.5 տոկոսով: Էլեկտրական էներգիայի ներքին սպառումը 2025 թվականին կազմել է 7259.5 միլիոն կՎտժ՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 450.4 միլիոն կՎտժ-ով կամ 6.6 տոկոսով: Ընդ որում, շուկայի ազատականացված հատվածում սպառվել է 2413.5 միլիոն կՎտժ էլեկտրական էներգիա՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 521.3 միլիոն կՎտժ-ով կամ 27.5 տոկոսով:

Էլեկտրաէներգետիկական համակարգի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները հրապարակված են հանձնաժողովի պաշտոնական կայքէջում ([https://psrc.am/contents/fields/electric\\_energy/el\\_energy\\_reports](https://psrc.am/contents/fields/electric_energy/el_energy_reports)), իսկ ստորև նշված աղյուսակում ներկայացված է նշված ցուցանիշների՝ 2024-2025 թվականների ամփոփ համեմատությունը.

**Էլեկտրաէներգետիկական համակարգի հիմնական տեխնիկայնորոգման  
ցուցանիշները 2024-2025 թվականների համեմատական արդյունքներով**

№	Անվանումներ	2024թ. մլն կՎտժ	2025թ. մլն կՎտժ	Տարբերություն	
				մլն կՎտժ	%
<b>1.</b>	Արտադրող կայաններից էլեկտրական էներգիայի առաքում, այդ թվում՝	<b>8823.9</b>	<b>9348.4</b>	<b>524.4</b>	<b>5.9%</b>
1.1	«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի արտմային էլեկտրակայան	2629.1	2700.8	71.6	2.7%
1.2	«ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի ջերմային կայան	89.6	92.4	2.8	3.1%
1.3	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Հրազդան-5» ջերմային կայան	356.1	327	-29.1	-8.1%
1.4	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ջերմային կայան	1233	1114.7	-118.3	-9.5%
1.5	«Արմփատեր» ՓԲԸ-ի ջերմային կայան	1708.9	1703	-5.9	-0.3%
1.6	«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի ՀԷԿ-երի համալիր	357.3	390	32.8	9.1%
1.7	«Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի ՀԷԿ-երի համալիր	683.3	882.2	198.8	29.1%
1.8	Այլ կայաններ	1766.7	2138.4	371.7	21%
<b>2.</b>	Ներհոսք	<b>144.9</b>	<b>63</b>	<b>-81.9</b>	<b>-56.5%</b>
<b>3.</b>	Մուտք բարձր լարման ցանց	<b>8968.8</b>	<b>9411.4</b>	<b>442.6</b>	<b>4.9%</b>
<b>4.</b>	Կորուստներ հաղորդման ցանցում (% հաշվարկված մուտքի նկատմամբ)	<b>143.2</b>	<b>143.6</b>	<b>0.4</b>	<b>0.27%</b>
		2%	1.97%	-0.03	-
<b>5.</b>	Առաքում բարձր լարման ցանցերից	<b>8825.6</b>	<b>9267.8</b>	<b>442.2</b>	<b>5%</b>
5.1	Ներքին սպառում	7287.8	7767	479.3	6.5%
5.2	Արտահանում	1537.8	1500.7	-37.1	-2.4%
<b>6.</b>	Կորուստներ բաշխիչ ցանցերում (% հաշվարկված մուտքի նկատմամբ)	<b>478.7</b>	<b>507.5</b>	<b>28.8</b>	<b>6%</b>
		6.6%	6.5%	-0.01	-
<b>7.</b>	Սպառված էլեկտրական էներգիա, այդ թվում՝	<b>6809.1</b>	<b>7259.5</b>	<b>450.4</b>	<b>6.6%</b>
7.1	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	4916.8	4846	-70.8	-1.4%
7.2	Շուկայի ազատականացված հատվածի սպառողներ	1892.2	2413.6	521.3	27.5%

**2.4. Գազամատակարարման համակարգի հիմնական տեխնիկայնորոգման ցուցանիշները**

2025 թվականին Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 2705.3 միլիոն խմ բնական գազ, որից 2229.5 միլիոն խմ-ն Ռուսաստանի Դաշնությունից, իսկ 475.8

միլիոն խմ-ն՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից: Ընդ որում, 2025 թվականին՝ 2024 թվականի համեմատությամբ, Ռուսաստանի Դաշնությունից բնական գազի ներկրման ծավալը կրճատվել է 2.6 տոկոսով, իսկ Իրանի Իսլամական Հանրապետությունից՝ ավելացել 6.6 տոկոսով: Հանրապետությունում բնական գազի սպառման ընդհանուր ծավալը 2025 թվականին՝ 2024 թվականի համեմատությամբ, գրեթե չի փոփոխվել, սակայն առանձին սպառողական խմբերի մասով սպառման ծավալները 2024-2025 թվականների համեմատության մեջ ենթարկվել են որոշակի փոփոխությունների:

Գազամատակարարման համակարգի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները հրապարակված են հանձնաժողովի պաշտոնական կայքէջում ([https://psrc.am/contents/fields/gas/gas\\_reports](https://psrc.am/contents/fields/gas/gas_reports)), իսկ Հայաստանի Հանրապետություն բնական գազի ներկրման, փոխադրման և գազաբաշխման համակարգերում գազի կորուստների, ինչպես նաև ըստ առանձին սպառողական խմբերի՝ սպառման ծավալների մասին ամփոփ տեղեկատվությունը 2024-2025 թվականների համեմատական արդյունքներով, արտացոլված է ստորև նշված աղյուսակում.

**Գազամատակարարման համակարգի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները 2024-2025 թվականների համեմատական արդյունքներով**

(միլիոն խմ)

N	Ցուցանիշներ	2024թ.	2025թ.	Տարբերություն	%
1	Ներկրված գազի քանակը, այդ թվում՝	2734.8	2705.3	-29.5	-1.1
1.1	Ռուսաստանի Դաշնությունից	2288.5	2229.5	-59.0	-2.6
1.2	Իրանի Իսլամական Հանրապետությունից	446.3	475.8	29.5	6.6
2	Վերցվել է գազատարներից և գազի ստորգետնյա պահեստ և կայանից	73.0	95.7	22.7	31.2
3	Մղվել է գազատարներ և գազի ստորգետնյա պահեստ և կայան	78.0	75.8	-2.2	-2.8
4	Գազի կորուստները փոխադրման համակարգում	116.2	98.5	-17.7	-15.2

5	Գազի ծախսը սեփական կարիքների համար՝ փոխադրման համակարգում	5.5	6.0	0.5	8.9
6	Գազի կորուստները բաշխման համակարգում	32.1	33.3	1.3	3.9
7	Գազի ծախսը սեփական կարիքների համար՝ բաշխման համակարգում	2.3	2.3	0	0
8	Վերականգնված գազ	0.7	1.8	1.1	139.6
9	Բաշխման համակարգում իրացված գազի ծավալը, այդ թվում՝	2573.0	2583.3	10.4	0.4
1)	<i>Բնակչություն</i>	<i>896.3</i>	<i>921.7</i>	<i>25.4</i>	<i>2.8</i>
2)	<i>Էներգետիկա</i>	<i>732.8</i>	<i>693.7</i>	<i>-39.1</i>	<i>-5.3</i>
3)	<i>Արդյունաբերություն</i>	<i>273.5</i>	<i>277.0</i>	<i>3.5</i>	<i>1.3</i>
4)	<i>Ավտոգազային ցանցերի ծնշակայաններ (ԱԳԼՃԿ)</i>	<i>360.0</i>	<i>355.9</i>	<i>-4.1</i>	<i>-1.1</i>
5)	<i>Բյուջետային կազմակերպություններ</i>	<i>56.1</i>	<i>57.4</i>	<i>1.2</i>	<i>2.2</i>
6)	<i>Այլ սպառողներ</i>	<i>254.2</i>	<i>277.6</i>	<i>23.4</i>	<i>9.2</i>

## 2.5. Սակագնային քաղաքականություն

Հանձնաժողովի կողմից իրականացվող սակագնային քաղաքականությունը նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը, ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրեր:

2025 թվականի օգոստոսի 1-ից մեկնարկել է գազամատակարարման համակարգում խթանիչ սակագնային քաղաքականության նպատակով կիրառվող երկրորդ հնգամյա ժամանակահատվածը: Հաշվի առնելով հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 1-ի №32-Ն որոշմամբ հաստատված՝ գազամատակարարման համակարգում կարգավորվող սակագների հաշվարկման մեթոդիկայի պահանջները և գազամատակարարման համակարգի ընկերությունների տնտեսական գործունեության արդյունքների վրա ազդող գործոնների փոփոխությունները, ինչպես նաև վերը նշված

կարգավորման 2-րդ ժամանակահատվածի թիրախային ցուցանիշները՝ 2025 թվականի օգոստոսի 1-ից վերանայվել են բնական գազի փոխադրման, գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման և բնական գազի բաշխման սակագները:

Մասնավորապես, թիրախային ցուցանիշների մասով՝


➤ կարգավորման երկրորդ ժամանակահատվածի սակագների հաշվարկներում կորուստների մեծությունն ամրագրվել է 3.9 տոկոս՝ առաջին ժամանակահատվածի համար սահմանված 5.07 տոկոսի փոխարեն, ինչը համարժեք է սակագնի հաշվարկներում շուրջ 1,9 մլրդ դրամով բնական գազի գնման ծախսի կրճատման,

➤ աշխատողների թվաքանակը առաջին հնգամյա ժամանակահատվածի համար ամրագրված 5383-ի փոխարեն երկրորդ հնգամյա ժամանակահատվածի համար ամրագրվել է 5390, ընդ որում, մի կողմից՝ աշխատողների թիվը կրճատվել է որպես թիրախ ամրագրված 300-ով, իսկ մյուս կողմից՝ ճշգրտվել է բաշխիչ ցանցի երկարության նախատեսվածից ավել աճով պայմանավորված՝ ավելացնելով այն 307-ով: Արդյունքում, աշխատանքի վարձատրության գծով ծախսի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

➤ նորոգման, նյութական և այլ ծախսերը հաշվարկվել են փաստացի ծախսերի վերլուծության հիման վրա և ընդունվել 2024 թվականի սակագներում ներառված ծախսերի 90%-ից ոչ ավելի չափով՝ նորոգման և նյութական ծախսերը ճշգրտված սղաճով, իսկ այլ ծախսերում ներառված գումարների հավաքագրման ծախսը՝ բնակչության սպառման ծավալով և սակագնի աճով: Արդյունքում՝ նորոգման և նյութական ծախսերը կրճատվել են շուրջ 0,54 մլրդ դրամով (առանց ավելացված արժեքի հարկի), իսկ այլ ծախսերի մասով էական փոփոխություն չի եղել,


➤ անհուսալի դեբիտորական պարտքերի հաշվարկման համար կիրառվող տոկոսային մեծությունը կրճատվել է 0,03 տոկոսային կետով:

**Գազամատակարարման համակարգում  
ծառայությունների մատուցման սակագները  
(դրամ/հազար խմ)**




Միևնույն ժամանակ, ամփոփելով գազամատակարարման համակարգի սակագների վրա ազդող բոլոր գործոնների հանրագումարը՝ օգոստոսի 1-ից սպառողներին վաճառվող բնական գազի սակագների փոփոխության անհրաժեշտություն չի առաջացել, և դրանք մնացել են անփոփոխ, բացառությամբ՝ 30 ՄՎտ և ավելի տեղակայված հզորությամբ ջերմաէլեկտրակայաններին վաճառվող բնական գազի սակագնի, որոնց համար տարեվերջին մեկնարկած էլեկտրական էներգիայի սակագների վերանայման շրջանակում էլեկտրաէներգետիկական համակարգի տարեկան կանխատեսվող հաշվեկշռով նախատեսված էլեկտրական էներգիայի առաքման համար անհրաժեշտ բնական գազի սակագինը սահմանվել է 146.21 ԱՄՆ դոլար/հազ.խմ-ին համարժեք դրամ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը):

**Բնական գազի վաճառքի սակագնի կառուցվածքը  
(ԱՄՆ դոլար/հազար խմ)**



**«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի սակագնային մարժայի  
կառուցվածքը (ԱՄՆ դոլար/հազար խմ)**




**«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագները (ներառյալ ԱԱՀ-ն)**

<b>№</b>	<b>Սպառողական խմբեր</b>	<b>Չափի միավոր</b>	<b>Սակագին</b>
<b>1.</b>	<b>ՀՀ կառավարության 03.11.2016թ. №1122-Ն որոշման համաձայն՝ սոցիալապես անապահով ընտանիքներ</b>		
	<i>տարեկան մինչև 600 խմ գազի համար</i>	դրամ/ հազ. խմ	100000
	<i>տարեկան 600 խմ-ն գերազանցող գազի համար</i>	դրամ/ հազ. խմ	143700
<b>2.</b>	<b>Գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսություններ՝</b>		
	<i>նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը ժամանակահատվածի համար</i>	\$/հազ. խմ	233.9
	<i>ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ժամանակահատվածի համար՝</i>		
	<i>մինչև 10 հազար խմ-ի շրջանակում սպառվող գազի համար</i>	դրամ/ հազ. խմ	143700
	<i>10 հազար խմ-ն գերազանցող բնական գազի համար</i>	\$/հազ. խմ	265.81
<b>3.</b>	<b>Գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող վերամշակող՝ պահածոների, խմիչքների և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող անձինք</b>	\$/հազ. խմ	233.9
	<b>4. 30 ՄՎտ և ավել հզորությամբ ՋԷԿ-երի համար՝</b>		
	<i>Էլեկտրական էներգիայի տարեկան հաշվեկշռով նախատեսված էլեկտրական էներգիայի առաքման համար անհրաժեշտ բնական գազի համար</i>	\$/հազ. խմ	146.21
	<i>Էլեկտրական էներգիայի տարեկան հաշվեկշռով նախատեսված էլեկտրական էներգիայի առաքման համար անհրաժեշտ բնական գազի համար</i>	\$/հազ. խմ	265.81
<b>5.</b>	<b>1-4-րդ կետերում չնշված մյուս սպառողների համար՝ յուրաքանչյուր ամսում՝</b>		
	<i>մինչև 10 հազար խմ-ի շրջանակում սպառվող գազի համար</i>	դրամ/ հազ. խմ	143700
	<i>10 հազար խմ-ն գերազանցող բնական գազի համար</i>	\$/հազ. խմ	265.81

▪ ԱՄՆ դոլարով նշված սակագները սահմանված են բանաձևի տեսքով և հաշվարկվում են յուրաքանչյուր ամսվա դրամական մեծությունները՝ հաշվետու ամսվան նախորդող ամսվա 25-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքի մեծության հիման վրա:

Հաշվի առնելով էլեկտրաէներգետիկական համակարգում գործող ընկերությունների սակագների հաշվարկման մեթոդիկան, պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերի ու լիցենզիաների պայմանների դրույթները, ԷՄՇ

կանոնների պահանջները և 2026 թվականի փետրվարի 1-ից մինչև 2027 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածի համար կանխատեսվող էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ներկրման և արտահանման հաշվեկշիռը, Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի մարման և սպասարկման ծախսերի իրականացման ժամանակացույցերը, արտարժույթների փոխարժեքների փոփոխությունները, բաշխողի (երաշխավորված մատակարարի), արտադրող կայանների և ծառայություն մատուցողների մոտ կանխատեսված և փաստացի ծավալների շեղման արդյունքում հասույթների ճշգրտումը, 2025 թվականին իրականացված կապիտալ ներդրումների փոխհատուցման անհրաժեշտությունը և էլեկտրաէներգետիկական համակարգում գործող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վրա ազդող մի շարք այլ գործոնների փոփոխությունները՝ հանձնաժողովը 2025 թվականի տարեվերջին վերահաշվարկել է սակագնային կարգավորման ենթակա արտադրող խոշոր կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության), ծառայություններ մատուցողների կողմից մատուցվող էլեկտրական էներգիայի հաղորդման, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, շուկայի օպերատորի, էլեկտրական էներգիայի հաշվեկշռման (նվազագույն և առավելագույն) ծառայությունների սակագները, հաշվեկշռման և հաճախականության կարգավորման նպատակով երկրորդային և երրորդային պահուստի ապահովման վճարները, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության սակագնային մարժան և վերջինիս կողմից էլեկտրական էներգիայի բաշխման ծառայությունների մատուցման սակագները:



1) Արմփաուեր\* սակագինը սահմանված է կայանից 01.02.2025թ.-31.01.2026թ. ընկած ժամանակաշրջանում առաքվող մինչև 1693.21 մլն կՎտժ էլեկտրական էներգիայի, իսկ 01.02.2026թ.-31.01.2027թ. ընկած ժամանակաշրջանում՝ առաքվող մինչև 1586.73 մլն կՎտժ-ի համար,

2) Արմփաուեր\*\* սակագինը սահմանված է կայանից 01.02.2025թ.-31.01.2026թ. ընկած ժամանակաշրջանում առաքվող 1693.21 մլն կՎտժ-ից ավել էլեկտրական էներգիայի, իսկ 01.02.2026թ.-31.01.2027թ. ընկած ժամանակաշրջանում՝ առաքվող 1586.73 մլն կՎտժ-ից ավել էլեկտրական համար,

3) ՀՇՄ-ի նվազագույն սակագին 1\*-ը 01.02.2025թ.-31.01.2026թ. ժամանակահատվածի համար սահմանված է I, II, VII, VIII, XI, XII ամիսների համար, իսկ 01.02.2026թ.-31.01.2027թ. ժամանակահատվածի համար՝ I, II, XI, XII ամիսների համար,

4) ՀՇՄ-ի նվազագույն սակագին 2\*\*-ը 01.02.2025թ.-31.01.2026թ. ժամանակահատվածի համար սահմանված է III, IV, V, VI, IX, X ամիսների, իսկ 2026 թվականի համար՝ III, IV, V, VI, VII, VIII, IX, X ամիսների համար:


5) Հրազդան-5\* սակագինը սահմանված է կայանից 01.02.2025թ.-31.01.2026թ. ընկած ժամանակաշրջանում առաքվող մինչև 163.064 մլն կՎտժ էլեկտրական էներգիայի, իսկ 01.02.2026թ.-31.01.2027թ. ընկած ժամանակաշրջանում՝ առաքվող մինչև 1030.21 մլն կՎտժ-ի համար,

6) Հրազդան-5\*\* սակագինը սահմանված է կայանից 01.02.2025թ.-31.01.2026թ. ընկած ժամանակաշրջանում առաքվող 163.064 մլն կՎտժ-ից ավելի էլեկտրական էներգիայի, իսկ 01.02.2026թ.-31.01.2027թ. ընկած ժամանակաշրջանում՝ առաքվող 1030.21 մլն կՎտժ-ից ավել էլեկտրական էներգիայի համար,


7) ՀրազՁԷԿ\* սակագինը սահմանված է կայանից 01.02.2026թ.-31.01.2027թ. ընկած ժամանակաշրջանում առաքվող մինչև 126.79 մլն կՎտժ էլեկտրական էներգիայի համար,

8) ՀրազՁԷԿ\*\* սակագինը սահմանված է կայանից 01.02.2025թ.-31.01.2026թ. ժամանակահատվածի համար առաքվող ամբողջ էլեկտրական էներգիայի, իսկ 01.02.2026թ.-31.01.2027թ. ընկած ժամանակաշրջանում առաքվող 126.79 մլն կՎտժ-ից ավել էլեկտրական էներգիայի համար:

**Հզորությունների ամսական վճարները (դրամ/կՎտ՝ առանց ԱԱՀ-ի)**




**ՀԷՑ-ի կողմից էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման սակագները (դրամ/կՎտ՝ առանց ԱԱՀ-ի)**




Միևնույն ժամանակ, էլեկտրաէներգետիկական համակարգի սակագների վերանայման արդյունքում սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագների վերանայման անհրաժեշտություն չի առաջացել, և դրանք մնացել են անփոփոխ, բացառությամբ՝ որակավորված սպառողի կարգավիճակ չստացած կամ էլեկտրական էներգիայի այլ մատակարար չընտրած սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագնի, որը սահմանվել է 56,77 դրամ/կՎտ՝ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը)՝ նախկին 54,61 դրամ/կՎտ-ի փոխարեն:

**ՀԷՑ-ի կողմից էլեկտրաէներգիայի վաճառքի՝ 01.02.2026թ-ից գործող սակագնի կառուցվածքը (դրամ/կՎտժ)**



**ՀԷՑ-ի սակագնային մարժայի՝ 01.02.2026թ-ից գործող կառուցվածքը (դրամ/կՎտժ)**




**«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագները (դրամ/կՎտժ՝ ներառյալ ԱԱՀ-ն)**

<b>№</b>	<b>Սպառողական խմբեր</b>	<b>Սակագին</b>
1.	<b>ՀՀ կառավարության 03.11.2016թ. №1122-Ն որոշման համաձայն՝ սոցիալապես անապահով ընտանիքներ</b>	
	<i>ցերեկային սակագին</i>	29.99
	<i>գիշերային սակագին</i>	19.99
2.	<b>0.38 կՎ լարմամբ սնվող՝ ամսական մինչև 200 կՎտժ սպառում ունեցող բնակիչներ, բացառությամբ 1-ին կետով սահմանված սպառողներ</b>	
	<i>ցերեկային սակագին</i>	46.48
	<i>գիշերային սակագին</i>	36.48
3.	<b>0.38 կՎ լարմամբ սնվող՝ ամսական 201 կՎտժ-ից մինչև 400 կՎտժ սպառում ունեցող բնակիչներ, բացառությամբ 1-ին կետով սահմանված սպառողներ</b>	
	<i>ցերեկային սակագին</i>	48.48
	<i>գիշերային սակագին</i>	38.48
4.	<b>0.38 կՎ լարմամբ սնվող՝ ամսական 400 կՎտժ-ից ավել սպառում ունեցող բնակիչներ, բացառությամբ 1-ին կետով սահմանված սպառողների</b>	
	<i>ցերեկային սակագին</i>	53.48
	<i>գիշերային սակագին</i>	43.48
5.	<b>0.38 կՎ լարմամբ սնվող այլ սպառողներ (բացառությամբ բնակչության)</b>	
	<i>ցերեկային սակագին</i>	53.48
	<i>գիշերային սակագին</i>	43.48
6.	<b>6 (10) կՎ լարմամբ սնվող սպառողներ</b>	
	<i>ցերեկային սակագին</i>	50.48
	<i>գիշերային սակագին</i>	40.48
7.	<b>35 կՎ լարմամբ սնվող սպառողներ</b>	
	<i>ցերեկային սակագին</i>	44.48
	<i>գիշերային սակագին</i>	40.48
8.	<b>110 կՎ լարմամբ սնվող սպառողներ</b>	
	<i>ցերեկային սակագին</i>	41.98
	<i>գիշերային սակագին</i>	37.98
9.	<b>ԷՄԱ կանոններով սահմանված դեպքերում սպառողի էլեկտրական էներգիայի մատակարարումը վերսկսելու, ինչպես նաև սպառողի կողմից ԷՄԱ կանոններով և ԷՄՇ կանոններով սահմանված ժամկետում և կարգով որակավորված սպառողի կարգավիճակ չստանալու կամ էլեկտրական էներգիայի այլ մատակարար չընտրելու դեպքում սակագին</b>	56.77

Ինչպես յուրաքանչյուր տարի, 2025 թվականին ևս, ելնելով սղաճի և արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից, համաձայն ընդունված մեթոդիկայի, հանձնաժողովի նախաձեռնությամբ վերանայվել են վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: Արդյունքում, սահմանվել են թվով 61 արևային էլեկտրակայաններից, 3 հողմային էլեկտրակայաններից և թվով 111 փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները:

Հաշվետու տարվա ընթացքում ներկայացված հայտերի հիման վրա, ըստ գործող կարգի, սահմանվել են 2 փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: Սահմանվել է նաև արդյունաբերական մասշտաբի թվով 1 (Մասրիկ-1) արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագինը՝ 16,3 դրամ/կՎտժ (առանց ավելացված արժեքի հարկի):



- Խումբ 1 հողմակայանները մինչև 01.11.2018թ. լիցենզիա ստացած հողմակայաններն են:
- Խումբ 2 հողմակայանները 31.12.2021թ-ից հետո լիցենզիա ստացած մինչև 30 ՄՎտ հզորությամբ հողմակայաններն են:
- Խումբ 1 արևային կայանները մինչև 01.11.2018թ. լիցենզիա ստացած և և 1-ին սակագինը մինչև 31.12.2019թ. հաստատված մինչև 1 ՄՎտ հզորությամբ արևային կայաններն են:
- Խումբ 2 արևային կայանները 02.11.2018-31.12.2020թ. լիցենզիա ստացած և 1-ին սակագնի հայտը մինչև 31.10.2022թ. ներկայացրած մինչև 5 ՄՎտ հզորությամբ արևային կայաններն են:

- Խումբ 3 արևային կայանները 02.11.2018-31.12.2020թ. լիցենզիա ստացած և 1-ին սակագնի հայտը 31.10.2022թ-ից հետո ներկայացնող մինչև 5 ՄՎտ հզորությամբ արևային կայաններն են:
- Խումբ 4 արևային կայանները 31.12.2020թ-ից հետո լիցենզիա ստացող մինչև 5 ՄՎտ հզորությամբ արևային կայաններն են:
- Խումբ 5 արևային կայանները ՀՈԱԿ-ների և ՀՎԷԷՀ-ի կողմից լիցենզիա ստացած մինչև 1 ՄՎտ հզորությամբ արևային կայաններն են:
- 2-5-րդ խմբերի արևային կայանների սակագների նկատմամբ կիրառվում է 0.9 գործակից, եթե փոփոխել (ընդլայնվել) է էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացած՝ փաստաթղթերով ներկայացված կայանի կառուցման համար անհրաժեշտ հողատարածքը կամ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման լարումը:
- Կենսազանգվածի կայանները 31.12.2020թ-ից հետո լիցենզիա ստացող մինչև 30 ՄՎտ հզորությամբ կենսազանգվածի կայաններն են:

Հաշվի առնելով ԷՄՇ կանոնների պահանջները՝ սահմանվել են «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերություններին առաքվող և «ԱՐՄՓԱՌԻԵՐ» փակ բաժնետիրական ընկերությունից ձեռք բերվող, «Հայկական ատոմային էլեկտրակայան» և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ուղիղ պայմանագրերի շուկայի կարգավորվող բաղադրիչում պարտադիր վաճառքի ենթակա էլեկտրական էներգիայի չափաքանակները:

Հաշվետու տարվա վերջին ուսումնասիրվել և հաստատվել են պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերի շրջանակում գործող կայանների, երկրորդային և երրորդային պահուստն ապահովող արտադրողների 2026 թվականի պայմանագրային և տնօրինելի հզորությունները:

## **2.6. Լիցենզավորում և լիցենզավորված անձանց միջև կնքված պայմանագրեր**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի №48-Լ որոշման №2 հավելվածով հավանության արժանացած՝ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրով (մինչև 2040 թվականը) նախատեսված մրցակցային շուկայի ձևավորման ու զարգացման փուլում նշանակալի կլինի արտադրողների և մատակարարների դերը:

Էլեկտրական էներգիայի գնման երաշխիք չունեցող՝ մրցակցային արևային

կայանների մեծ տեմպերով զարգացումը՝ առանց նշված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի պահուստավորման հնարավորության և աշխատանքի ռեժիմների կարգավարման, խնդիրներ է ստեղծում էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների ապահովման տեսանկյունից: Ելնելով նշվածից՝ հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 19-ի N°191-Ն և N°192-Ն որոշումներով Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման և բաշխման ցանցային կանոնների փոփոխություններով նախատեսված կարգավորումների համաձայն, 2024 թվականի հուլիսի 1-ից հետո կառուցվող՝ գնման երաշխիք չունեցող կայանների համար նախատեսվել է, որ էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների խախտման կամ դրա հնարավոր վտանգի դեպքում էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը իրավունք կունենա նշված կայաններից էլեկտրական ցանց էլեկտրական էներգիայի առաքումը դադարեցնելու կամ սահմանափակելու՝ առավելագույնը 1080 ժամով: Էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմային խնդիրներով պայմանավորված՝ նշված կարգավորումները լրամշակվել են հանձնաժողովի 2025 թվականի ապրիլի 9-ի N°136-Ն որոշմամբ, որով դադարեցման կամ սահմանափակման ժամերի թիվը հասցվել է 2200-ի:

Չնայած վերոնշյալ իրավակարգավորումներին, հանձնաժողովը 2025 թվականի ընթացքում էներգետիկայի բնագավառում տրամադրել է 47 լիցենզիա, որից էլեկտրական էներգիայի արտադրության՝ 31 (այդ թվում՝ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքից հրաժարված՝ 13, բացառապես սեփական կարիքների համար՝ 12 և փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության՝ 6 լիցենզիաներ), էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության՝ 1 լիցենզիա (50,1 ՄՎտ էլեկտրական և 29,2 ՄՎտ ջերմային հզորությամբ), էլեկտրական էներգիայի մատակարարման՝ 12 և էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի՝ 3 լիցենզիաներ:

2025 թվականի ընթացքում քննարկվել են նաև լիցենզիաների վերաձևակերպման՝ 12, լիցենզիաներով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածների երկարաձգման՝ 27, ինչպես նաև լիցենզիաների գործողության ժամկետների երկարաձգման՝ 30 հայտեր:

2025 թվականին էլեկտրական էներգիայի արտադրության փուլ են անցել 24

արևային էլեկտրակայաններ և 1 փոքր հիդրոէլեկտրակայան, ինչի արդյունքում համակարգ են մուտք գործել համապատասխանաբար՝ 109,7 ՄՎտ և 2,2 ՄՎտ գումարային հզորություններ (ընդհանուր՝ 111,9 ՄՎտ գումարային հզորություն), ինչը դրական ազդեցություն կունենա հետագայում վերականգնվող էներգետիկայի մասով թիրախային ցուցանիշներին հասնելու համար: Մասնավորապես, 2025 թվականի մայիսի 15-ից շահագործման փուլ է անցել առաջին խոշոր արդյունաբերական «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանը՝ 55 ՄՎտ հզորությամբ, որը տեղակայված է Գեղարքունիքի մարզում: Կայանի նախագծային, ապա փաստացի տեղակայված հզորությունը կազմել է 55 ՄՎտ:

Հանձնաժողովի կողմից պայմանագրերի գրանցման կարգին համապատասխան փորձաքննություն են անցել և գրանցվել էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև կնքված 11 պայմանագրեր:

## **2.7. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում և գնումների մոնիթորինգ**

Հանձնաժողովի գործառույթներից իր կարևորությամբ առանձնանում է էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացը, այդ թվում՝ ընկերությունների ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ համապատասխան վերլուծական տեղեկանքների կազմումն ու հրապարակումը: Նշված աշխատանքները կարևորվում են սակագներում ներառման ենթակա ներդրումների օգտակար և օգտագործվող ծավալի որոշման, ներդրումների արդյունավետության գնահատման, այդ համատեքստում անարդյունավետ և ոչ հիմնավոր ներդրումների ծավալի բացահայտման և վերհանման առումով՝ սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագներում դրանք չներառելու սկզբունքից ելնելով: Այդ նպատակով, հանձնաժողովը յուրաքանչյուր տարի քննարկում և համաձայնություն է տալիս էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների հաջորդ տարիների ներդրումային ծրագրերին, ինչպես նաև ամփոփում է նույն ընկերությունների նախորդ տարվա ներդրումային գործունեության արդյունքները և հրապարակում համապատասխան վերլուծական տեղեկանքներ:

2025 թվականի ընթացքում հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային


ծրագրերի շրջանակում էներգետիկ ենթակառուցվածքներում ներդրումներ են իրականացրել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «Հաշվարկային կենտրոն», «Հայկական ատոմային էլեկտրակայան», «Բարձրավոլտ էլեկտրացանցեր», «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությունները: Բացի այդ, «Հայկական ատոմային էլեկտրակայան» և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունները ներդրումներ են իրականացրել նաև Հայաստանի Հանրապետության կառավարությունից կամ վերջինիս երաշխիքով միջազգային ֆինանսական կառույցներից ստացված վարկային ծրագրերի շրջանակում:

Իրականացվող ներդրումային ծրագրերն ուղղված են մի շարք խնդիրների լուծմանն ու կարգավորմանը: Մասնավորապես, «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների ներդրումային ծրագրերն ուղղված են սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը, նոր սպառողների սպառման համակարգերի միացմանը, առևտրային հաշվառման համակարգերի կատարելագործմանը, հետագա շահագործման համար ոչ պիտանի սարքավորումների փոխարինմանը, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրմանը: «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը միտված է հիդրոէլեկտրակայանների հիդրոլոգիական կառույցների և պատվարների ուսումնասիրությանը և շինարարական աշխատանքների ծավալի գնահատմանը, շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավմանը, «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրն ուղղված է «Սևան-Հրազդան» կասկադի վերականգնմանը՝ հետագա անվտանգ, արդյունավետ և հուսալի շահագործման նպատակով, «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը՝ համակարգչային և այլ տեխնիկայի ձեռքբերմանը: «Բարձրավոլտ էլեկտրացանցեր», «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությունների ներդրումային ծրագրերն ուղղված են ընկերությունների բնականոն գործունեության ապահովմանը: «Հայկական

ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը միտված է կայանի շահագործման ժամկետի երկարաձգմանը, ինչն ամրագրված է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N°48-Լ որոշմամբ հավանության արժանացած և 2021 թվականի նոյեմբերի 18-ի N°1902-Լ որոշմամբ հաստատված, համապատասխանաբար՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի՝ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների բնագավառի մասով:

Հանձնաժողովն առանձնակի ուշադրություն է դարձնում էլեկտրական էներգիայի և բնական գազի բաշխման գործունեություն իրականացնող ընկերությունների ներդրումային ծրագրերի կառուցվածքին՝ ներդրումներն առաջնահերթ առավել վատթար վիճակում գտնվող բնակավայրերի սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանն ուղղելու նպատակով: Անհատապես ուսումնասիրվում է սպառողների կողմից սպասարկման որակի ցուցանիշներին (ընդհատումներ, էլեկտրական էներգիայի լարման թույլատրելի սահմաններից շեղումներ) վերաբերող յուրաքանչյուր բողոք, և բարձրացված հարցի լուծման ուղղությամբ հասցեական աշխատանքները ներառվում են ընկերությունների ներդրումային ծրագրերում:

Կարգավորվող ընկերությունների կողմից իրականացված ներդրումային ծրագրերի շրջանակում՝ 2025 թվականներին ավարտված և շահագործման հանձնված ներդրումների ծավալը կազմել է ավելի քան 52 միլիարդ դրամ:



Հանձնաժողովը մշտապես հետևում է նաև իր կարգավորման դաշտում գործող «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությունների, «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազԶԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող գնումների արդյունավետությանն ու թափանցիկությանը: Գնումների գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով իրականացվող գնումների մասին ողջ տեղեկատվությունը հրապարակվում է ինչպես Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկագրում, այնպես և ընկերությունների ինտերնետային կայքերում:

2025 թվականի ընթացքում հանձնաժողովը, համաձայն կարգավորվող անձանց գնումների կարգերի նկատմամբ սահմանված պահանջների կատարման մոնիթորինգի կարգի, իրականացրել է կարգավորվող անձանց գնումների առանձին գործարքների մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրությունների, գործարքների

համար կիրառվող գնման մեթոդների ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարների ընտրության ընթացակարգերի մոնիթորինգը:

## **2.8. Վերականգնվող էներգետիկա**





2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանրապետությունում գործել են՝

- 191 փոքր հիդրոէլեկտրակայաններ, ևս 20-ը գտնվել են կառուցման փուլում: Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմել է շուրջ 403 ՄՎտ, իսկ կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայաններինը՝ շուրջ 38 ՄՎտ: Ըստ այդմ, կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գործարկումից հետո հանրապետությունում կգործեն 211 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ 441 ՄՎտ գումարային հզորությամբ.
- 100 արևային էլեկտրակայաններ (ներառյալ 55 ՄՎտ հզորությամբ «Մասրիկ-1» արևային կայանը), ևս 42-ը գտնվել են կառուցման փուլում: Գործող արևային էլեկտրակայանների գումարային հզորությունը կազմել է շուրջ 448 ՄՎտ, իսկ կառուցվող արևային էլեկտրակայաններինը՝ շուրջ 183 ՄՎտ: Ըստ այդմ, կառուցվող էլեկտրակայանների գործարկումից հետո հանրապետությունում կգործեն 142 արևային էլեկտրակայաններ՝ 631 ՄՎտ գումարային հզորությամբ.
- 4 հողմային էլեկտրակայաններ, ևս 1-ը գտնվել է կառուցման փուլում: Գործող հողմային էլեկտրակայանների գումարային հզորությունը կազմել է շուրջ 4,2


ՄՎտ, իսկ կառուցվող հողմային էլեկտրակայանինը՝ 3,9 ՄՎտ: <sup>1</sup>

2025 թվականին փոքր հիդրոէլեկտրակայաններից և էներգիայի վերականգնվող այլ ռեսուրսների կիրառմամբ գործող կայաններից առաքված էլեկտրական էներգիայի մասնաբաժինը էլեկտրաէներգետիկական համակարգի արտադրող կայաններից առաքված էլեկտրական էներգիայի նկատմամբ կազմել է 24 տոկոս:



<sup>1</sup> «Ջող Ուինդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքի վարչական տարածքում (գյուղ Սոթք) կառուցված 1320 կՎտ տեղակայված հզորությամբ «Ջող Ուինդ» հողմային էլեկտրակայանը պատերազմի արդյունքում հայտնվել է Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի վերահսկողության ներքո:


**Ռազմավարական թիրախ՝ մինչև 2030թ.  
մինչև 30 ՄՎտ հզորությամբ կայանները՝ 395 ՄՎտ**



- 2017թ. 10 ՄՎտ սահմանաչափ՝ մինչև 1 ՄՎտ կայանների համար
- 2018-2020թթ.՝ 200 ՄՎտ սահմանաչափ՝ մինչև 5 ՄՎտ կայանների համար
- 2021թ.՝ 15 ՄՎտ սահմանաչափ՝ մինչև 1 ՄՎտ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների համար
- 2022թ. առանց գնման երաշխիք և բացառապես սեփական կարիքների համար կայաններ

Վերականգնվող էներգետիկայի զարգացման և էներգետիկ անկախության ապահովման առումով տարեցտարի առավել նշանակալի է դառնում վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողների և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության միջև իրականացվող էլեկտրական էներգիայի փոխհոսքերի գործընթացը: Նշված գործընթացն իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող սպառողներին հնարավորություն է տալիս առանց գործունեության լիցենզիա ստանալու՝ արտադրելու և սպառելու էլեկտրական էներգիա, միաժամանակ, ավելցուկն առաքելով բաշխման ցանց՝ հաշվարկային տարվա ընթացքում այն սպառելու կամ, հակառակ պարագայում, համապատասխան փոխհատուցում ստանալու հնարավորությամբ: Ինքնավար էներգաարտադրությունը թույլ է տալիս սեփական արտադրության միջոցով բարելավել և համահարթեցնել սպառված էլեկտրական էներգիայի դիմաց վճարման ենթակա գումարներն ինչպես կենցաղային մակարդակում՝ նվազեցնելով ինքնավար էներգաարտադրող հանդիսացող բնակիչ-սպառողների էլեկտրական էներգիայի գծով ծախսերը, այնպես էլ գործարար միջավայրում՝ նպաստելով ինքնավար էներգաարտադրող հանդիսացող կազմակերպությունների ապրանքների և ծառայությունների ինքնարժեքի նվազեցմանը:

Ոլորտին առնչվող իրավակարգավորումների շարունակական բարեփոխման արդյունքում ինքնավար էներգաարտադրությունն ըստ էության հանդիսանում է վերականգնվող էներգետիկայի ամենաարագ զարգացող ուղղություններից, ինչի մասին են վկայում արձանագրված ցուցանիշները: Մասնավորապես, 2025 թվականի տարեվերջի դրությամբ բաշխման ցանցին միացված ինքնավար էներգաարտադրողների քանակը կազմել է 50059, իսկ վերջիններիս համակարգերի ընդհանուր հզորությունը գերազանցել է 640 ՄՎտ-ը: Նույն ժամանակահատվածում ձևավորված են եղել 1082 ինքնավար խմբեր, իսկ ևս 1101 ինքնավար էներգաարտադրողներ օգտվել են էլեկտրաէներգետիկական համակարգի մեկ կամ ավելի կետերում էլեկտրական էներգիա արտադրելու և նույն կամ տարբեր կետերում այն սպառելու հնարավորությունից: Ստորև ներկայացված է ինքնավար էներգաարտադրության զարգացման տեմպերի դինամիկան 2016-2025 թվականների արդյունքներով:



### **3. Զրային ոլորտ**

#### **3.1. Սակագնային քաղաքականություն**

Սպառողներին մանրածախ խմելու ջրի մատակարարման ու ջրահեռացման (կեղտաջրերի) ծառայությունների մատուցման 2026 թվականի սակագները 2025 թվականի մակարդակին պահպանելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի, «Վեոլիա Զուր» փակ բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Օ-Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» ընկերության միջև 2025 թվականի հոկտեմբերի 15-ին ստորագրված՝ «Երևան Զուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» №60 համաձայնագիրը հաշվի առնելով՝ հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397-Ա որոշմամբ «Վեոլիա Զուր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրած խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ԼՁՆ°0001 լիցենզիայի պայմանների «Սակագներ և սակագների ճշգրտումներ» №3 հավելվածում վարձակալության պայմանագրային 10-րդ տարվա (2026 թվական) բազիսային մանրածախ սակագինը 145.5 դրամ/խմ-ի փոխարեն ամրագրվել է 147.63 դրամ/խմ (առանց ավելացված արժեքի հարկի)՝ համապատասխանաբար, վերանայելով նաև մեծածախ ջրամատակարարման և մեծածախ ջրահեռացման բազիսային սակագները:


«Վեոլիա Զուր» փակ բաժնետիրական ընկերությունը, համաձայն իրեն տրամադրված լիցենզիայի պայմանների, 2025 թվականի օգոստոսի 8-ին վարձակալության 10-րդ պայմանագրային տարվա համար խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների ճշգրտման հայտ է ներկայացրել հանձնաժողով՝ առաջարկելով բաժանորդներին մատուցվող ծառայությունների սակագները պահպանել 2025 թվականին գործող սակագների մակարդակին: Համաձայն սակագների ճշգրտման մեխանիզմների, սակագները յուրաքանչյուր տարի ենթակա են ճշգրտման՝ հաշվի առնելով մանրածախ ջրամատակարարման ծավալների փոփոխությունը, սղաճը, ընկերությանը

մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությունը, ինչպես նաև ջրային համակարգն այլ նպատակներով օգտագործելուց և խմելու ջուրը ոռոգման նպատակով մատակարարելուց ստացվող լրացուցիչ հասույթով պայմանավորված նվազեցումը:


Հաշվի առնելով սակագների վրա ազդող վերը թվարկված գործոնները և մանրաձախ ջրամատակարարման փաստացի ծավալների հավաստիության ստուգման նպատակով իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ հանձնաժողովը հաշվետու տարում հաշվարկել է 2026 թվականի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշվարկված մանրաձախ ծառայությունների մատուցման ճշգրտված գումարային սակագնի և բաժանորդների համար 2025 թվականին փաստացի գործող գումարային գնի տարբերությունը չի գերազանցել 0.5%-ը, 2026 թվականի համար հաստատվել են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման՝ բաժանորդների համար 2025 թվականին փաստացի գործող գներին հավասար սակագներ, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի N<sup>1122</sup>-Ն որոշմամբ սահմանված սոցիալապես անապահով սպառողների սակագինը սահմանելով գործող 180,0 դրամ/խմ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) մեծության չափով, իսկ մյուս բաժանորդների համար՝ գումարային 200,42 դրամ/խմ (ներառյալ ավելացված արժեքի հարկը):

Անփոփոխ են մնացել նաև ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող այլ անձանց, ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող համայնքներին, համայնքային բյուջետային հիմնարկներին և ոչ առևտրային կազմակերպություններին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման մեծաձախ ծառայությունների ու «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման սակագները:

**Խմելու ջրի 2026թ. սակագնի ճշգրտման գործոնները (դրամ/լիտր՝ ԱԱՀ-ով)**  
 Ճշգրտված սակագին՝ **199.586 դրամ/լիտր**, սոցիալապես անապահովները՝  
**180 դրամ/լիտր** և մյուս սպառողները՝ **200,42 դրամ/լիտր**:



**Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների սակագները (դրամ/լիտր՝ ներառյալ ԱԱՀ-ն)**




2026 թվական

- Մանրաձախ գումարային սակագին (սոցիալապես անապահովներ)
- Մանրաձախ գումարային սակագին (մյուս սպառողներ)՝ սահմանված
- Մեծաձախ ջրամատակարարման սակագին
- Մեծաձախ ջրահեռացման սակագին
- Մետրոպոլիտենի ստորգետնյա ջրերի հեռացման սակագին

### 3.2. Խմելու ջրի սպառման ծավալների մոնիթորինգ և ջրամատակարարման գրաֆիկների հրապարակում

«Վեոլիա Զուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված՝ Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների ճշգրտման հայտի ուսումնասիրության շրջանակում, ընկերության կողմից գրանցված մանրաձախ ջրամատակարարման փաստացի ծավալների հավաստիության ստուգման նպատակով հանձնաժողովի և սպառողների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ համատեղ 2025 թվականին ևս իրականացվել է մոնիթորինգ՝ հայտնաբերելու փաստացի մատակարարվող Խմելու ջրի չհաշվառվող ծավալները: Մոնիթորինգն իրականացվել է կարճ ժամկետներով՝ երեք փուլով, Երևան քաղաքում և մարզերի սպասարկման տարածքներում: Մոնիթորինգի արդյունքում ջրամատակարարման լրացուցիչ ծավալները հաշվարկվել են ապօրինի ջրօգտագործման, ջրաչափերի շրջանցման և այլ խախտումների համար՝ ներանցման խողովակի թողունակությամբ, ջրի շարժման 1,5 մ/վրկ արագությամբ և ջրամատակարարման հրապարակված գրաֆիկով: Հաշվարկված լրացուցիչ ջրաքանակը բաժանորդներին մատուցվող ծառայությունների գումարային սակագնի վրա ունեցել է դրական ազդեցություն՝ շուրջ 0,4 դրամ/խմ-ով (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը):



Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների համաձայն՝ մատակարարը պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ՝ նոյեմբեր ամսվա վերջին տասնօրյակում, իր պաշտոնական կայքում հրապարակել բաժանորդների հաջորդ տարվա ջրամատակարարման գրաֆիկը, ինչպես նաև այդ մասին կանոններով սահմանված կարգով բաժանորդների իրազեկված լինելու վերաբերյալ գրավոր ծանուցել հանձնաժողովին:

2025 թվականին սպառողներին մատակարարված խմելու ջրի գրաֆիկների հրապարակման գործընթացն իրականացվել է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններով սահմանված կարգով:

### **3.3. Ջրային ոլորտի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները**

2025 թվականին «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության ջրամատակարարման համակարգ (ընկերության սպասարկման տարածքում չներառված համայնքների ջրամատակարարման կարգավորումը դուրս է հանձնաժողովի իրավասությունների շրջանակից) մուտք գործած խմելու ջրի ծավալը կազմել է 516.8 միլիոն խմ, որը 2024 թվականի համեմատությամբ նվազել է շուրջ 4.3 միլիոն խմ-ով կամ 0.8 տոկոսով: Ջրամատակարարման համակարգում խմելու ջրի կորուստները 2025 թվականին՝ 2024 թվականի համեմատությամբ, նվազել են 12.3 միլիոն խմ-ով կամ 3.5 տոկոսով:

Ջրային ոլորտի (այդ թվում՝ խմելու և ոռոգման ջրամատակարարման մասով) հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները հրապարակված են հանձնաժողովի պաշտոնական կայքէջում ([https://psrc.am/contents/fields/water/water\\_reports](https://psrc.am/contents/fields/water/water_reports)), իսկ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության ջրամատակարարման համակարգի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները՝ 2024-2025 թվականների համեմատական արդյունքներով, արտացոլված են ստորև նշված աղյուսակում:

(հազար խմ)

h/h	Ցուցանիշներ	2024թ.	2025թ.	Տարբերություն	%
1	Համակարգ մուտք գործած ջրի ծավալը	521 137.9	516 788.9	-4 349.0	-0.8
2	Կորուստներ համակարգում	350 973.9	338 662.7	-12 311.2	-3.5
		67.3%	65.5%	-1.8%	-2.6
3	Ջրամատակարարում, այդ թվում՝	170 164.0	178 126.2	7 962.3	4.7
1)	Բնակչություն	113 359.5	118 857.2	5 497.7	4.8
2)	Բյուջեպային կազմակերպություններ	9 194.5	9 821.0	626.4	6.8
3)	Այլ սպառողներ	41 838.3	44 157.3	2 319.0	5.5
4)	Մեծածախ ջրամատակարարում	5 771.7	5 290.7	-481.0	-8.3
4	Ջրահեռացում, այդ թվում՝	127 278.9	131 363.8	4 084.9	3.2
1)	Բնակչություն	83 643.8	86 448.5	2 804.6	3.4
2)	Բյուջեպային կազմակերպություններ	7 300.3	7 720.2	419.9	5.7
3)	Այլ սպառողներ	32 894.4	34 796.6	1 902.2	5.8
4)	Մեծածախ ջրահեռացում	1 356.7	320.5	-1036.1	-76.4
5)	Երևանի «Մեքրոպոլիտեն» ՓԲԸ	2 083.7	2 078.0	-5.7	-0.3

Ոռոգման ջրամատակարարման համակարգում 2025 թվականին ջրառի ընդհանուր ծավալը կազմել է 1090.2 միլիոն խմ, որը 2024 թվականի համեմատությամբ ավելացել է շուրջ 13.4 միլիոն խմ-ով կամ 1.2 տոկոսով: Համակարգում ոռոգման ջրի կորուստները 2025 թվականին՝ 2024 թվականի համեմատությամբ աճել են 20.2 միլիոն խմ-ով կամ 10.1 տոկոսով, իսկ շուրջ 869.6 միլիոն խմ ոռոգման ջրի ծավալ ջրտուքի կետերում մատակարարվել է ջրօգտագործող ընկերություններին:

Ստորև նշված աղյուսակում արտացոլված են 2024-2025 թվականների համեմատական արդյունքներով ոռոգման ջրամատակարարման համակարգի տեխնիկատնտեսական ցուցանիշները:

(հազար խմ)

h/h	Ցուցանիշներ	2024թ.	2025թ.	Տարբերություն	%
1	Ընդամենը ջրառ	1 076 827.0	1 090 213.1	13 386.1	1.2
2	Ջրի կորուստները համակարգում	200 315.6	220 561.5	20 246.0	10.1
		18.6%	20.2%	1.6%	8.6
3	Ջրտուփի կետերում մատակարարված ոռոգման ջուր, այդ թվում՝	876 511.4	869 651.6	-6 859.9	-0.8
1)	Ջրօգտագործողների ընկերությունների մատակարարվող ոռոգման ջուր	869 833.0	862 995.3	-6 837.7	-0.8
2)	Այլ ջրօգտագործողներին մատակարարվող ոռոգման ջուր	6 678.4	6 656.3	-22.1	-0.3

#### 4. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ

Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները և Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի ձեռքբերումները, ոլորտի զարգացման շարունակականության ապահովման նկատառումներից ելնելով՝ հանձնաժողովը 2025 թվականի ընթացքում ծավալուն աշխատանքներ է իրականացրել մրցակցության խթանման (երաշխավորման), ենթակառուցվածքների զարգացման ու ընդլայնման, նոր տեխնոլոգիաների ներդրման, ծառայությունների հասանելիության և հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի հուսալիության ու անվտանգության ապահովման, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության ուղղությամբ:

Հիշյալ աշխատանքների առնչությամբ, մասնավորապես, կարևորվում են հետևյալ միջոցառումներն (կարգավորումներ) ու դրանց արդյունքում արձանագրված՝ ոլորտը բնութագրող առանցքային ցուցանիշները.

#### **4.1. Հանձնաժողովի իրավական ակտերի բարեփոխումներ և նոր կարգավորումներ**

Հանձնաժողովը 2025 թվականին շարունակել է բնագավառը կարգավորող իրավական ակտերի բարեփոխումներն ու ոլորտի զարգացմանն ուղղված նոր իրավակարգավորումների կիրառումը.

➤ Հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 2-ի №237-Ն որոշմամբ 2025 թվականի նոյեմբերի 1-ից նոր կարգավորումներ են նախատեսվել որոշակի ժամկետով բաժանորդագրման պարտավորությամբ կնքված և ժամկետի ինքնաբերաբար երկարաձգում նախատեսող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների (շարժական/բջջային և ամրակցված/ֆիքսված կապ) մատուցման պայմանագրերի մասով: Մասնավորապես, նշված պայմանագրերի դեպքում՝ ծառայություններ մատուցողները (օպերատորները) պետք է պայմանագրի ժամկետի ավարտից առնվազն 5 օր առաջ բաժանորդներին ծանուցեն պայմանագրի ժամկետի ավարտի և ինքնաբերաբար երկարաձգման պայմանների մասին: Բացի այդ, որոշակի ժամկետով բաժանորդագրման պարտավորությամբ կնքված և որոշակի ժամկետով բաժանորդագրման պարտավորության պայմանով ինքնաբերաբար երկարաձգում նախատեսող պայմանագրերի դեպքում նախատեսվել է նաև գործողության ժամկետի ինքնաբերաբար երկարաձգումից հետո առնվազն 30 օրվա ընթացքում պայմանագիրն առանց հավելյալ վճարի (տույժ, տուգանք կամ հրաժարագին) միակողմանի դադարեցնելու բաժանորդների հնարավորությունը:

➤ Հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 17-ի №320-Ն որոշմամբ լրամշակվել են շարժական կապի կանխավճարային և հետվճարային հեռախոսաքարտերի տրամադրման պայմանագրերի արխիվների պահպանման ստանդարտների վերաբերյալ կարգավորումները, որով կարգավորվում են շարժական բջջային կապի բաժանորդագրության պայմանագրերի կնքման և դրանց պահպանման ընթացակարգերը, ադ թվում՝ օպերատորի կայքի կամ հավելվածի միջոցով էլեկտրոնային եղանակով պայմանագրի կնքման մասով: Նոր կարգավորումների համաձայն՝ շարժական բջջային կապի բաժանորդագրության պայմանագրերի կնքման ընթացակարգերի արդիականացման շրջանակում օպերատորների համար

հնարավորության է ստեղծվել իրենց կայքերի կամ հավելվածների միջոցով էլեկտրոնային եղանակով շարժական բջջային կապի հեռախոսաքարտերի տրամադրման (միայն ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման հնարավորությամբ) պայմանագրեր կնքելու նաև օտարերկրյա քաղաքացիների հետ: Օպերատորի կայքի կամ հավելվածի տեխնիկական նախագիծը (նկարագիրը) պետք է նախապես համաձայնեցվի հանձնաժողովի հետ, կայքի կամ հավելվածի գործարկմանը վերաբերող՝ հուսալիության և անվտանգության ապահովմանն ուղղված նվազագույն պարտադիր պայմանների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացի հանդիսացող բաժանորդների նույնականացման ապահովման նպատակով:

➤ Հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 19-ի №382-Ն որոշմամբ նոր պահանջներ են սահմանվել հրապարակային պայմանագրերի հիման վրա օպերատորների կողմից մատուցվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների որակի որոշակի չափանիշների մասով, որոնք կկիրառվեն 2026 թվականի հուլիսի 1-ից: Սահմանվել են, որ ամրակցված և շարժական կապի ցանցերով ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման դեպքում բաժանորդային պայմանագրերում ամրագրման ենթակա են տվյալների հոսքի արագությունների (ներբեռնման և վերբեռնման նվազագույն, սովորաբար հասանելի և առավելագույն (գովազդվող)) նկարագրությունը, միացման կամ ակտիվացման (վերաակտիվացման) համար անհրաժեշտ ժամանակահատվածը, ծառայությունների որակի վերաբերյալ բաժանորդների բողոքներին արձագանքման ժամանակահատվածը, ինչպես նաև ծառայությունների մատուցման ժամանակահատվածի հաշվարկի և ծառայությունների ակտիվացման նկարագրությունը, ներառյալ՝ ժամանակահատվածի տևողությունը, սկիզբը և ավարտը, ժամանակահատվածը ներառող օրերի, ժամերի և րոպեների հաշվարկման մոտեցումներն ու ծառայությունների ակտիվացման մանրամասն ընթացակարգը: Սահմանվել են նաև բաժանորդից անկախ տեխնիկական պատճառներով ծառայությունների որակի անկման կամ ծառայությունների ընդհատման (ներառյալ՝ խափանման կամ անսարքության) դեպքում՝ պատշաճ որակի կամ ընդհատված ծառայությունների վերականգնման համար անհրաժեշտ ժամանակահատվածը, բաժանորդին տրամադրվող փոխհատուցման դեպքերը և կարգը:

➤ Նկատի ունենալով արբանյակային կապի գլոբալ համակարգերով շահագործվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերով (օրինակ, «ՍփեյսԻքս»/«Ստարլինկ» և այլն) մատուցվող ծառայությունների նոր կիրառությունը, օրենսդրական համապատասխան փոփոխությունների, նոր կարգավորումների սահմանման արդյունքում հնարավորություն է ստեղծվել հանրապետությունում նշված ծառայությունների մատուցման և հասանելիության համար, որի արդյունքում «Ստարլինկ ԷՅԷՄ» ընկերությանը տրամադրված լիցենզիայի և ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության հիման վրա ընկերությունը 2025 թվականի տարեսկզբից սկսել է Ստարլինկի (Starlink) միջոցով ՍփեյսԻքսի (SpaceX) կողմից արբանյակային կապի գերարագ լայնաշերտ ինտերնետ ծառայություններ մատուցել Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

#### ***4.2. Ենթակառուցվածքների զարգացում, ընդլայնում, նոր տեխնոլոգիաների ներդրում և ծառայությունների հասանելիության ապահովում***

➤ Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային շարժական կապի ցանցերի զարգացման և ծածկույթների ընդլայնման գործընթացի շրջանակում, այդ թվում՝ հանձնաժողովի կողմից սահմանված լիցենզիոն պարտավորությունների կատարմամբ «Տելեկոմ Արմենիա», «Վիվա Արմենիա» և «Յուբոն» ընկերությունների կողմից իրենց շարժական կապի ցանցերի ու ծածկույթների զարգացման (արդիականացման և ընդլայնման) արդյունքում Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերում (100%) հասանելի է շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթը, իսկ հանրապետության 497 բնակավայրում (49.6%-ում) առնվազն մեկ օպերատորի 5G տեխնոլոգիայի ծածկույթը (առավելապես «Յուբոն» ընկերության ցանցն է, կիրառվում են Non Stand Alone/Dynamic Spectrum Sharing/Carrier aggregation-ոչ ինքնավար ռեժիմի ցանցի/սպեկտրի դինամիկ բաժանման/կրող հաճախականության ագրեգացիայի լուծումների հիման վրա):


Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային ճանապարհների 99.6%-ում հասանելի է առնվազն մեկ օպերատորի հանրային շարժական կապի ծածկույթ՝ 95,9%-ում 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայով: Բոլոր 3 օպերատորների շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը հասանելի է ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային

ճանապարհների առնվազն 80%-ում: Ծածկույթի հասանելիության նշված ցուցանիշն ապահովվել է հանձնաժողովի կողմից նախորդ տարիներին իրականացված՝ ռադիոհաճախականությունների հատվածների մրցութային գործընթացների շրջանակում շարժական կապի օպերատորների նկատմամբ սահմանված՝ ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային ճանապարհների առնվազն 80%-ում լայնաշերտ ինտերնետային բացօթյա ծածկույթ ապահովելու պարտավորությունների կատարմամբ:

Ստորև բերված են հանրապետության բնակավայրերում և ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային ճանապարհներին շարժական կապի ծածկույթների հասանելիության դիագրամները՝ ըստ կիրառվող տեխնոլոգիաների և բնակավայրերում փոխադարձ ներթափանցելիության հասանելիության, ինչպես նաև ըստ յուրաքանչյուր օպերատորի (տոկոսային արտահայտությամբ):

Շարժական կապի ծածկույթի հասանելիության ցուցանիշները բնակավայրերում (և միջպետական ճանապարհներին ընդհանուր ծածկույթի գնահատման մասով) հաշվարկվել են օպերատորների կողմից իրականացված՝ համակարգչային սիմուլյացիաների, իսկ միջպետական ճանապարհներին 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի հասանելիության մասով՝ վարման սկզբունքով չափումների (drive test) իրականացման արդյունքերի հիման վրա:

«Ճանապարհներում հանրային շարժական կապի 5G տեխնոլոգիայի ծածկույթ (%)»




Հանրապետության 497 բնակավայրում (49,6%) հասանելի է առնվազն մեկ օպերատորի 5G տեխնոլոգիայի ծածկույթը (առավելապես «Յուրոմ» ՓԲԸ-ի ցանցն է, կիրառվում են Non Stand Alone/Dynamic Spectrum Sharing/Carrier aggregation-ոչ ինքնավար ռեժիմի ցանցի/սպեկտրի դինամիկ բաժանման/կրող հաճախականության

ագրեգացիայի լուծումների հիման վրա): 5G տեխնոլոգիայի ծածկույթը հասանելի է հանրապետության գրեթե բոլոր՝ 48 քաղաքային (քաղաքային բնակավայրերի 98%-ում, բացառությամբ Դաստակերտ քաղաքի) և 449 գյուղական (գյուղական բնակավայրերի 47,1%-ում) բնակավայրերում, որը բնակչության ընդգրկվածության առումով կազմում է շուրջ 85%: Ընդ որում, Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում հասանելի են բոլոր 3 օպերատորների 5G տեխնոլոգիայի ծածկույթները, իսկ 12 քաղաքային բնակավայրում՝ 2 օպերատորների («Յուբոն» և «Վիվա Արմենիա») 5G տեխնոլոգիայի ծածկույթները:


Հանրապետությունում 5G տեխնոլոգիայի հասանելիությունը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 449 բնակավայրով՝ ավելի քան 10 անգամ:

**Հանրային շարժական կապի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն՝ անկախ կիրառվող 2G/3G/4G/5G տեխնոլոգիայից (%)**




Ընդհանուր ծածկույթ՝ առնվազն՝ 2 օպերատոր 3 օպերատոր

**4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)**



Ընդհանուր ծածկույթ՝ առնվազն՝ 2 օպերատոր 3 օպերատոր

**3G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)**



Ընդհանուր ծածկույթ՝ առնվազն՝ 2 օպերատոր 3 օպերատոր


Հանրապետության բնակավայրերում առնվազն 2 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի ծածկույթի հասանելիության ցուցանիշը՝ անկախ կիրառվող տեխնոլոգիայից, կազմել է 96,9% (971 բնակավայր), իսկ 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայինը՝ 93,9% (941 բնակավայր), որն ընդլայնվել է 16 բնակավայրով: 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի ծածկույթի հասանելիությունը՝ անկախ կիրառվող տեխնոլոգիայից, կազմել է 90,6% (908 բնակավայր)՝ ընդլայնվելով 23 բնակավայրով, իսկ 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ցուցանիշը՝ 83,6% (838 բնակավայր), որն ընդլայնվել է 590 բնակավայրով՝ ավելի քան 3,5 անգամ: Նկատենք, որ 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթի նշված ցուցանիշի նման էական աճն (որը 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում էր շուրջ 24,7%՝ 248 բնակավայր) ապահովվել է հանձնաժողովի կողմից 2023 թվականին իրականացված՝ 700ՄՀց և 800ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածների մրցութային գործընթացի շրջանակում «Տելեկոմ Արմենիա» ընկերության նկատմամբ սահմանված՝ բնակավայրերի առնվազն 80%-ում լայնաշերտ ինտերնետային բացօթյա ծածկույթ ապահովելու պարտավորությունների կատարմամբ:

Այսինքն, հանրապետության բոլոր 1002 բնակավայրերում հասանելի է առնվազն 1 օպերատորի շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը: Առնվազն 2 օպերատորի շարժական կապի ծածկույթը՝ անկախ կիրառվող տեխնոլոգիայից, հասանելի է 971 բնակավայրում, որից 941 բնակավայրում՝ 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայով, իսկ 3 օպերատորների շարժական կապի ծածկույթը՝ անկախ կիրառվող


տեխնոլոգիայից, հասանելի է 908 բնակավայրում, որից 838 բնակավայրում (որտեղ բնակվում է հանրապետության բնակչության 98,1%-ը)՝ 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայով:

Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային ճանապարհների 99,3%-ում հասանելի է «Վիվա Արմենիա» ընկերության շարժական կապի ծածկույթը՝ 82,9%-ը 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայով, 98,7%-ում՝ «Տելեկոմ Արմենիա» ընկերության շարժական կապի ծածկույթը՝ 90,3%-ը 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայով և 99,6%-ում՝ «Յուքոմ» ընկերության շարժական կապի ծածկույթը՝ 95,5%-ը 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայով:

**Ընդհանուր օգտագործման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին շարժական կապի ծածկույթի հասանելիությունն անկախ կիրառվող տեխնոլոգիայից՝ ըստ օպերատորների**



**4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթի հասանելիությունը ընդհանուր օգտագործման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին՝ ըստ օպերատորների**



**Շարժական կապի ցանցերի և տեխնոլոգիաների հասանելիությունն՝ ըստ օպերատորների (%)**




90.3%

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթ միջպետական ավտոմոբիլային ճանապարհներին



### Վիվա Արմենիա ՓԲԸ

- Ընդհանուր ծածկույթ  
5G
- 4G+/LTE Advanced
- 3G
- 2G




82.86%

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթ միջպետական ավտոմոբիլային ճանապարհներին



### Յուրոմ ՓԲԸ

- Ընդհանուր ծածկույթ  
5G
- 4G+/LTE Advanced
- 3G
- 2G



95.94%

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթ միջպետական ավտոմոբիլային ճանապարհներին

Հանրապետության բնակավայրերում շարժական կապի ընդհանուր, այդ թվում՝ 4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ամենաընդարձակ ծածկույթը «Վիվա Արմենիա» ընկերության ծածկույթն է: Ընկերության շարժական կապի 4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթը հասանելի է հանրապետության բոլոր 1002 բնակավայրերում (100%):

2025 թվականի ընթացքում էապես՝ 604 բնակավայրով ընդլայնվել է «Տելեկոմ

Արմենիա» ընկերության շարժական կապի 4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթը:

Արդյունքում, «Տելեկոմ Արմենիա» ընկերության շարժական կապի ընդհանուր ծածկույթը հասանելի է 946 բնակավայրում (94,4%), այդ թվում՝ 853 բնակավայրում (85,1%)՝ 4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթը, իսկ «Յուքոմ» ընկերության շարժական կապի ընդհանուր ծածկույթը՝ 933 բնակավայրում (93,1%), այդ թվում՝ 926 բնակավայրում (92,4%)՝ 4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթը:

Հանրապետության բնակավայրերում շարժական կապի 5G տեխնոլոգիայի ամենաընդարձակ ծածկույթը «Յուքոմ» ընկերության ծածկույթն է: Ընկերության կողմից շարժական կապի ցանցի արդիականացման և վերազինման արդյունքում՝ հանրապետության քաղաքային գրեթե բոլոր՝ 48 քաղաքային (բացառությամբ Դաստակերտ քաղաքի) և 447 գյուղական բնակավայրերում հասանելի է դարձել ընկերության 5G տեխնոլոգիայի ծածկույթը:

Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային ճանապարհներին առավել ընդարձակ շարժական կապի ծածկույթ, այդ թվում՝ 4G+/LTE Advanced տեխնոլոգիայով, ունի «Յուքոմ» ընկերությունը, համապատասխանաբար՝ 99,6% և 95,9%:


Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային ամրակցված (ֆիքսված) կապի (հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների) զարգացման և ենթակառուցվածքների հասանելիության ուղղությամբ կատարված աշխատանքների շրջանակում պետք է նշել, որ հանրապետության բոլոր (100%) բնակավայրերում հասանելի են ամրակցված հեռախոսակապի ծառայությունները, այդ թվում 461 (46%) բնակավայրերում լարային՝ առավելապես օպտիկամանրաթելային տեխնոլոգիայով: Հանրապետության 781 (78%) բնակավայրերում հասանելի են ամրակցված լայնաշերտ լարային ինտերնետի ծառայությունները, այդ թվում՝ 774 (77,2%) բնակավայրերում, որոնք ընդգրկում են երկրի բնակչության շուրջ 98,3%-ը՝ օպտիկամանրաթելային ցանցերը (բաժանորդներին առաջարկվող լայնաշերտ ինտերնետի 20-100Մբիթ/վ և ավելի արագությամբ), իսկ 997 (99,5%) բնակավայրերում՝ 2-30Մբիթ/վ արագությամբ լայնաշերտ ինտերնետի անլար տեխնոլոգիաների ծառայությունները:

Նախորդ տարվա համեմատ լայնաշերտ ինտերնետի լարային տեխնոլոգիաների հասանելիությունն ընդլայնվել է 26, իսկ օպտիկամանրաթելային ցանցերի


հասանելիությունը՝ 31 բնակավայրով կամ 4.2%-ով:

Ստորև բերված են հանրապետության բնակավայրերում ամրակցված (ֆիքսված) կապի լայնաշերտ ինտերնետի հասանելիության դիագրամները՝ ըստ կիրառվող տեխնոլոգիաների և օպերատորների ամրակցված կապի ցանցերի փոխադարձ ներթափանցելիության հասանելիության (տոկոսային արտահայտությամբ)։


Ամրակցված կապի լայնաշերտ ինտերնետի հասանելիությունը բնակավայրերում (%)



Ամրակցված կապի լայնաշերտ ինտերնետի հասանելիության փոխադարձ ներթափանցելիություն՝ անկախ կիրառվող տեխնոլոգիայից (%)



**Ամրակցված կապի լայնաշերտ լարային ինտերնետի հասանելիության փոխադարձ ներթափանցելիություն (%)**



Ընդհանուր ծածկույթ    առնվազն՝ 2 օպերատոր    3 և ավելի օպերատոր

Այսինքն, հանրապետության բոլոր 1002 բնակավայրերում հասանելի են առնվազն 1 օպերատորի ամրակցված (ֆիքսված) կապի (հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետի հասանելիության) ծառայությունները:

Բնակավայրերի 75,1%-ում (753 բնակավայրում) հասանելի են առնվազն 2 օպերատորի, իսկ 53,1%-ում (532 բնակավայրում)՝ 3 և ավելի օպերատորների ամրակցված կապի (լարային կամ անլար տեխնոլոգիայի) լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունները, նախորդ տարվա համեմատ ընդլայնվելով համապատասխանաբար՝ 7 և 16 բնակավայրերով:

Բնակավայրերի 78%-ում (781 բնակավայրում) հասանելի են առնվազն 1 օպերատորի, 48,4%-ում (485 բնակավայրում)՝ առնվազն 2 օպերատորի, իսկ 26,7%-ում (268 բնակավայրում, որտեղ բնակվում է հանրապետության բնակչության ավելի քան 82%-ը) 3 և ավելի օպերատորների ամրակցված կապի լարային (առավելապես օպտիկամանրաթելային տեխնոլոգիայի) լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունները:

➤ 2025 թվականի ընթացքում իրականացված՝ շարժական կապի 5G տեխնոլոգիայի ներդրման համար անհրաժեշտ ռադիոհաճախականությունների մրցութային գործընթացի արդյունքում «Վիվա Արմենիա» ընկերությանը տրամադրված՝ 2300-2400ՄՀց ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություններով ամրագրված պարտավորությունների համաձայն՝ ընկերության կողմից, ըստ ժամանակացույցի (3-ից 7 տարվա ընթացքում), շարժական կապի 5G

տեխնոլոգիայի ծառայությունների հասանելիությամբ (բացօթյա/outdoor ծածկույթ) պետք է ապահովվի հանրապետության քաղաքային յուրաքանչյուր բնակավայր՝ համապատասխան բնակավայրի վարչական (կադաստրային) տարածքի առնվազն 60%-ը, ներառյալ՝ «Ինժեներական քաղաքի», «Ակադեմիական քաղաքի», Զվարթնոց, Գյումրու և Կապանի օդանավակայանների, հանրապետության սահմանային բոլոր գործող և նոր կառուցվող մաքսակետերի տարածքները, ինչպես նաև հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների (ներառյալ նոր կառուցվող) ընդհանուր երկարության 98%-ը՝ լայնաշերտ ինտերնետային բացօթյա (outdoor) ծածկույթով (որից առնվազն 10%-ը՝ 5G տեխնոլոգիայով):

➤ 2023 թվականին իրականացված՝ 700ՄՀg և 800ՄՀg ռադիոհաճախականությունների հատվածների մրցութային, ինչպես նաև լիցենզիոն գործընթացների շրջանակում՝ շարժական կապի օպերատորների նկատմամբ սահմանված պարտավորությունների կատարման արդյունքում 2025 թվականին՝

- հանրապետության բնակավայրերի և ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային ճանապարհների առնվազն 80%-ում հասանելի է դարձել «Տելեկոմ Արմենիա» ընկերության շարժական կապի 4G+(LTE Advanced) ծածկույթը, որի արդյունքում հանրապետության բնակավայրերում շարժական կապի բոլոր 3 օպերատորների («Տելեկոմ Արմենիա», «Վիվա Արմենիա», «Յուբոն» ընկերություններ) փոխադարձ ներթափանցելի 4G+(LTE Advanced) ծածկույթի հասանելիության ցուցանիշը 24,7%-ից հասցվել է 83,6%-ի (838 բնակավայր, որը բնակչության ընդգրկվածության առումով կազմում է հանրապետության բնակչության շուրջ 98%-ը): Նշվածի արդյունքում՝ ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային ճանապարհների առնվազն 80%-ում ևս հասանելի է դարձել բոլոր 3 օպերատորների շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը,
- Երևանում, Գյումրիում և Վանաձորում, տվյալ քաղաքների վարչական տարածքների ավելի քան 50%-ում՝ ներառյալ «Ինժեներական քաղաքի» տարածքում, հասանելի է դարձել «Տելեկոմ Արմենիա» ընկերության շարժական կապի 5G տեխնոլոգիայի ծածկույթը (առավելապես՝ «իրերի ինտերնետ»/IoT տեխնոլոգիայի ներդրմամբ),

- բարձրացվել են շարժական կապի բոլոր 3 օպերատորների կապի ցանցերի հուսալիության և անվտանգության մակարդակները,
- ՀԱՊՀ-ում (Պոլիտեխնիկ) «Վիվա Արմենիա» ընկերության կողմից հիմնվել է շարժական կապի ծառայություններ մատուցելու հնարավորությամբ ուսումնական լաբորատորիա, որը նպաստելու է հեռահաղորդակցության բնագավառի մասնագիտությունների՝ կրթական ծրագրերով մասնագիտացվող, ոլորտի համար անհրաժեշտ որակյալ կադրերի պատրաստմանը: Ուսանողներն օգտագործելով լաբորատորիայի հնարավորությունները, որն իրենից, ըստ էության, ներկայացնում է շարժական բջջային կապի լիարժեք ծառայություններ մատուցող օպերատորի մոդել, ուսումնառության ընթացքում կստանան գործնական գիտելիքներ և կիրառական փորձառություն, ինչը կնպաստի որպես որակյալ, «պատրաստի» և մրցունակ մասնագետների, հետագայում՝ առավել արդյունավետ կերպով հեռահաղորդակցության ոլորտի աշխատանքային գործունեության մեջ ընդգրկվելուն:

➤ Զուգահեռաբար, ընթացքի մեջ են նշված՝ 700ՄՀց և 800ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածների մրցութային, ինչպես նաև լիցենզիոն գործընթացների շրջանակում շարժական կապի օպերատորների նկատմամբ սահմանված պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքները, որոնց կատարման ժամկետներ են սահմանված 2026-2028 թվականները և որոնց կատարման արդյունքում՝

- կապիտալ ներդրումների իրականացմամբ՝ հանրապետության պաշտպանունակության ամրապնդման նպատակով կընդլայնվեն շարժական կապի բոլոր 3 օպերատորների կապի ենթակառուցվածքները, որոնց ծավալը՝ պարտավորությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետում, կկազմի ընդհանուր՝ շուրջ 2 միլիարդ դրամ,
- «Յուբոմ» ընկերության կողմից օպտիկամանրաթելային հասանելիություն չունեցող 302 բնակավայրերում կապահովվի լարային օպտիկամանրաթելային և (կամ) դրան որակապես համարժեք անլար տեխնոլոգիայի ամրակցված լայնաշերտ կապ: Այսինքն, արդյունքում նշված տեխնոլոգիայի լայնաշերտ ինտերնետ կապը հասանելի կլինի հանրապետության բոլոր բնակավայրերում,
- Կապան, Նոյեմբերյան, Իջևան, Դիլիջան, Ծաղկաձոր քաղաքներում,

յուրաքանչյուր քաղաքի վարչական (կադաստրային) տարածքի ավելի քան 50%-ում, ինչպես նաև Զվարթնոց, Գյումրու և Կապանի օդանավակայանների, հանրապետության սահմանային բոլոր գործող մաքսակետերի տարածքներում կապահովվի նաև «Տելեկոմ Արմենիա» ընկերության շարժական կապի 5G տեխնոլոգիայի բացօթյա ծածկույթի հասանելիությամբ:

Այս համատեքստում պետք է նշել, որ բնակավայրերում օպտիկամանրաթելային ցանցերի հասանելիության վերոնշյալ 77,2% ցուցանիշի արձանագրումն ու օպտիկամանրաթելային հասանելիություն չունեցող 302 բնակավայրերում ամրակցված լայնաշերտ կապի ենթակառուցվածքների հասանելիության ապահովման մասով «Յուրոմ» ընկերության նկատմամբ լիցենզիոն պարտավորության սահմանումը նպաստում են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված՝ հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերի առնվազն 80%-ում լայնաշերտ (օպտիկամանրաթելային) կապով և պետական թվային ծառայությունների հասանելիությամբ ապահովելու միջոցառման իրականացմանը:


Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև առկա մրցակցությունը, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացման և ծառայությունների հասանելիության ապահովման վերոնշյալ դրական զարգացումները նպաստել են ոլորտը բնութագրող ներքոհիշյալ առանցքային ցուցանիշների արձանագրմանը.

### **Հանրային շարժական (բջջային) կապ.**


➤ Հայաստանի Հանրապետության շարժական կապի ծառայությունների շուկայում գործում են 3 օպերատորներ՝ «Տելեկոմ Արմենիա», «Վիվա Արմենիա» և «Յուրոմ» ընկերությունները:

➤ Շարժական կապի բաժանորդների թվաքանակը 2025 թվականի տարեվերջին կազմել է **4 151 192**՝ նախորդ տարվա համեմատ աճելով 66 792 բաժանորդով, իսկ բնակչության մեջ շարժական կապի բաժանորդների ներթափանցելիության մակարդակը (penetration rate) կազմել է շուրջ **139,5%**\*: Ստորև բերված են շարժական կապի ծառայությունների շուկայի մասնաբաժիններն ու բաժանորդների թվաքանակի դինամիկան.


**Շարժական կապի բաժանորդների ընդհանուր քանակը (հազար)**



**Շարժական կապի բաժանորդների քանակը՝ ըստ օպերատորների (հազար)**




**Շարժական կապի ծառայությունների շուկայի մասնաբաժինները (%)**




➤ Շարժական լայնաշերտ ինտերնետի բաժանորդների թվաքանակը 2025 թվականի տարեվերջին կազմել է **3 550 621**<sup>\*</sup> նախորդ տարվա համեմատ աճելով 8.94%-ով (291 458 բաժանորդով), իսկ բնակչության մեջ շարժական լայնաշերտ ինտերնետի բաժանորդների ներթափանցելիության մակարդակը (penetration rate) կազմել է **119,3%\***: Ստորև բերված են շարժական լայնաշերտ ինտերնետի ծառայությունների շուկայի մասնաբաժիններն ու բաժանորդների թվաքանակի դինամիկան.

<sup>\*</sup> Հաշվարկն իրականացվել է 5 տարեկանից բարձր բնակչության հաշվով:


**Շարժական լայնաշերտ հնտերնետի բաժանորդների ընդհանուր քանակը (հազար)**



**Շարժական լայնաշերտ հնտերնետի բաժանորդների քանակը՝ ըստ օպերատորների (հազար)**



**Շարժական լայնաշերտ հնտերնետի ծառայությունների շուկայի մասնաբաժինները (%)**



Նշված ծառայությունների շուկան 2020-2025 թվականների ընթացքում ըստ էության էական փոփոխությունների չի ենթարկվել, այդուհանդերձ, շուկայում հատկապես շարժական լայնաշերտ հնտերնետ ծառայությունների մասով, նկատվում են փոփոխություններ՝ շուկայի առավել փոքր մասնաբաժիններ ունեցող 2 («Տելեկոմ Արմենիա» և «Յուբոմ») օպերատորների մասնաբաժինների աճի առումով, ինչն արդյունավետ մրցակցության դրական ցուցիչ է:


2025 թվականի տարեվերջի դրությամբ շարժական կապի, ներառյալ՝ շարժական

լայնաշերտ ինտերնետի ծառայությունների շուկայում գերակշռում են «Վիվա Արմենիա» ընկերության բաժանորդները (շուրջ 2,35 մլն կամ շարժական կապի ընդհանուր բաժանորդների 56,6%-ը): Նախորդ տարվա ընթացքում շարժական կապի առավել մեծ բաժանորդների թվի աճ արձանագրել է «Յուբոմ» ընկերությունը (շուրջ 66,3 հազար), իսկ շարժական լայնաշերտ ինտերնետի բաժանորդների թվի աճ՝ «Տելեկոմ Արմենիա» ընկերությունը (շուրջ 120,4 հազար):


Շարժական կապի բոլոր երեք օպերատորների մոտ շարունակաբար աճում են շարժական լայնաշերտ ինտերնետի բաժանորդների կշիռները շարժական կապի բաժանորդների ընդհանուր քանակում: 2025 թվականի տարեվերջին շարժական կապի բաժանորդների ընդհանուր քանակի 85,5%-ը կազմում են շարժական լայնաշերտ ինտերնետի բաժանորդները: Նախորդ տարեվերջին այդ ցուցանիշը կազմում էր 79,8% (դիագրամներն ստորև):

Ըստ յուրաքանչյուր օպերատորի շարժական կապի բաժանորդների քանակում շարժական լայնաշերտ ինտերնետի բաժանորդների կշիռը դիտարկելու պարագայում՝ շարժական լայնաշերտ ինտերնետի բաժանորդների կշռի առավել մեծ ցուցանիշ արձանագրվել է «Յուբոմ» ընկերության մոտ՝ 88,3%, իսկ 2020-2025 թվականների ընթացքում տվյալ կշռի, ինչպես նաև բաժանորդների աճի առավել մեծ դինամիկա գրանցել է «Տելեկոմ Արմենիա» ընկերությունը (ավելի քան 1.8 անգամ, իսկ շարժական լայնաշերտ ինտերնետի բաժանորդների բացարձակ թվով՝ ավելի քան 2 անգամ):

**Շարժական լայնաշերտ ինտերնետի բաժանորդների կշիռը շարժական կապի բաժանորդների ընդհանուր քանակում (%)**




**Յուրաքանչյուր օպերատորի շարժական լայնաշերտ ինտերնետի բաժանորդների կշիռն իր շարժական կապի բաժանորդների քանակում (%)**




Շարժական լայնաշերտ ինտերնետի բաժանորդների 11.1%-ը կազմում են իրավաբանական անձինք (շուրջ 393,7 հազար), իսկ 88,9%-ը՝ ֆիզիկական անձինք (շուրջ 3 մլն 157 հազար):


Շարժական լայնաշերտ ինտերնետի իրավաբանական անձ հանդիսացող /ԲԻԶՆԵՍ/ բաժանորդների քանակը 2024 թվականի տարեվերջի համեմատ աճել է 14,6%-ով, իսկ ֆիզիկական անձ հանդիսացող բաժանորդների քանակը՝ 8,3%-ով:

**Շարժական լայնաշերտ ինտերնետի բաժանորդների քանակը՝ ըստ բաժանորդների տեսակի**




**Շարժական լայնաշերտ ինտերնետի իրավաբանական անձ /ԲԻԶՆԵՍ/ բաժանորդների քանակը՝ ըստ օպերատորների և նրանց մասնաբաժինների (%)**






Շարժական լայնաշերտ ինտերնետի իրավաբանական անձ հանդիսացող /ԲԻՉՆԵՍ/ բաժանորդների մեջ գերակշռում են «Տելեկոմ Արմենիա» ընկերության բաժանորդները (շուրջ 151 հազար՝ ընդհանուր /ԲԻՉՆԵՍ/ բաժանորդների 38.4%-ը), իսկ 2025 թվականի ընթացքում շարժական լայնաշերտ ինտերնետի իրավաբանական անձ /ԲԻՉՆԵՍ/ բաժանորդների թվի առավել մեծ աճ է գրանցել «Յուլբոն» ընկերությունը (շուրջ 20,7 հազար):

**Շարժական կապի մեկ բաժանորդին ընկնող միջին ամսական հասույթ (ARPU)**



**Շարժական կապի մեկ բաժանորդին ընկնող միջին ամսական հասույթն՝ ըստ օպերատորների (ARPU)**



Նախորդ տարվա համեմատ աճել են շարժական կապի բոլոր 3 օպերատորների շարժական կապի մեկ բաժանորդին ընկնող միջին ամսական հասույթները, որի արդյունքում շարժական կապի ծառայությունների շուկայում տվյալ ցուցանիշի տարեկան աճը կազմել է 3,5% (ARPU):

### **Այսպիսով՝**

- 2025 թվականի տարեվերջի դրությամբ շարժական կապի, ներառյալ՝ շարժական լայնաշերտ ինտերնետի ծառայությունների առավել մեծ բաժանորդային բազա ունի «Վիվա Արմենիա» ընկերությունը,
- նախորդ տարվա ընթացքում շարժական կապի առավել մեծ բաժանորդների թվի աճ արձանագրել է «Յուբոմ» ընկերությունը, իսկ շարժական լայնաշերտ ինտերնետի բաժանորդների թվի աճ՝ «Տելեկոմ Արմենիա» ընկերությունը,
- շարժական կապի բաժանորդների քանակում շարժական լայնաշերտ ինտերնետի բաժանորդների առավել մեծ կշռի ցուցանիշ ունի «Յուբոմ» ընկերությունը, իսկ 2020-2025 թվականների ընթացքում տվյալ կշռի և բաժանորդների աճի առավել մեծ դինամիկա գրանցել է «Տելեկոմ Արմենիա» ընկերությունը,
- շարժական լայնաշերտ ինտերնետի իրավաբանական անձ /ԲԻՋՆԵՍ/ բաժանորդների մեջ առավել մեծ բաժանորդային բազա ունի «Տելեկոմ Արմենիա» ընկերությունը, իսկ նախորդ տարվա ընթացքում շարժական լայնաշերտ ինտերնետի իրավաբանական անձ /ԲԻՋՆԵՍ/ բաժանորդների թվի առավել մեծ աճ գրանցել է «Յուբոմ» ընկերությունը:

Ամփոփելով, շարժական կապի ծառայությունների շուկայի զարգացման վերը նկարագրված միտումները, շուկայում առավել փոքր 2 օպերատորների մասնաբաժինների աճի դինամիկան, ինչպես նաև տվյալ շուկայի տարբեր սեգմենտներում շարժական կապի տարբեր օպերատորների առաջատար դիրքերն ու մասնաբաժինների աճի դինամիկաները վկայում են նշված շուկայում առկա արդյունավետ և բարձր մրցակցային միջավայրի, իսկ շարունակաբար աճող շարժական լայնաշերտ ինտերնետի ծավալներն ու կշիռները՝ նորագույն տեխնոլոգիաների կիրառման և ծառայությունների հասանելիության զարգացման արդյունավետության մասին:


## Հանրային ամրակցված կապ.

➤ հանրապետությունում գործում է հանրային ամրակցված կապի 202 լիցենզավորված օպերատոր (170-ը՝ մարզերում և 32-ը՝ Երևանում), այդ թվում՝ ամրակցված հեռախոսակապի ծառայություններ մատուցող 12 օպերատոր, որոնցից 4-ը («Տելեկոմ Արմենիա», «Յուրոմ», «ՋիէնՍի-Ալֆա» և «Քրոսսնեթ» ընկերություններ) ծառայություններ են մատուցում հանրային ամրակցված հեռախոսային ցանցի տարածաշրջանային (աշխարհագրական) կողերով: Նախորդ տարվա ընթացքում հանձնաժողովի կողմից լիցենզավորվել են 5 օպերատորներ՝ 1-ը հանրապետության ամբողջ տարածքում և 4-ը մարզերում գործունեություն իրականացնելու նպատակով:


➤ ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետի բաժանորդների թվաքանակը 2025 թվականի տարեվերջին կազմել է **624 985**՝ նախորդ տարվա համեմատ աճելով շուրջ 3.5%-ով (21 025 բաժանորդով):

➤ ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մանրածախ շուկայում գերակշռել են օպտիկամանրաթելային (FTTx) տեխնոլոգիայից օգտվող բաժանորդները (557 194 բաժանորդ), որոնց տեսակարար կշիռը շարունակաբար աճում է և 2025 թվականի տարեվերջին կազմել է 89,2%: Նախորդ տարվա համեմատ օպտիկամանրաթելային հասանելիության բաժանորդների թվաքանակն աճել է **7.2%-ով** (շուրջ 37,9 հազարով), ինչը կանխատեսվել էր հանձնաժողովի 2025 թվականի գործունեության ծրագրով: Ամրակցված կապի տեխնոլոգիական զարգացման նշված հանգամանքով պայմանավորված՝ 31,8%-ով նվազել է լարային xDSL տեխնոլոգիայով ինտերնետի բաժանորդների թվաքանակը (ներկայումս կազմում է շուրջ 30,6 հազար): Ստորև բերված են ամրակցված լայնաշերտ ինտերնետ (այդ թվում՝ օպտիկամանրաթելային) ծառայությունների շուկայի մասնաբաժիններն ու բաժանորդների թվաքանակի դինամիկան.


**Ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետի և օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետի բաժանորդների քանակը**




**Օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետի բաժանորդների կշիռը ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետի բաժանորդների քանակում (%)**




**Օպտիկամանրաթելային ցանցով և xDSL տեխնոլոգիայով բաժանորդների քանակի համեմատական աղյուսակ**




**Ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետի բաժանորդների քանակը՝ ըստ օպերատորների**




**Ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետ ծառայությունների շուկայի մասնաբաժինները (%)**



**Օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետի բաժանորդների քանակը՝ ըստ օպերատորների**



**Օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետ ծառայությունների շուկայի մասնաբաժինները (%)**




Ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետի՝ հատկապես օպտիկամանրաթելային հասանելիության ընդլայնմանը և բաժանորդների քանակի աճին զուգահեռ, տվյալ բաժանորդների տեսակարար կշռում շարունակաբար աճում են նաև ամրակցված լայնաշերտ ինտերնետ ծառայություններ մատուցող և տվյալ շուկայում առավել փոքր մասնաբաժիններ ունեցող օպերատորների մասնաբաժինները և ներկայումս կազմում են տվյալ շուկայի 1/2-ը: Ընդ որում, օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետ ծառայությունների շուկայի մասով նշված ցուցանիշը 2020-2025 թվականների ընթացքում կրկնապատկվել է (եթե 2020 թվականին ամրակցված կապի շուրջ 200 օպերատորների ընդհանուր բաժանորդների թիվը կազմում էր տվյալ շուկայի միայն շուրջ 25%-ը, իսկ 75%-ը՝ կազմում էին ամրակցված կապի առավել խոշոր երեք՝ «Տեղեկոմ Արմենիա», «Յուբոմ», «ՋիԷնՍի-Ալֆա» օպերատորների բաժանորդները, ապա 2025 թվականի տարեվերջին օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետ ծառայությունների շուկայի

նշված մասնաբաժինները արդեն հավասարակշռվել են 50% հարաբերակցությամբ):

Նշվածը վկայում է ամրակցված լայնաշերտ և առավելապես օպտիկամանրաթելային տեխնոլոգիայի հիման վրա մատուցվող ինտերնետ հասանելիության ծառայությունների շուկայում առկա արդյունավետ մրցակության և դրա զարգացման դրական միտումների մասին:

«Յուբոմ» և «ԶիԷՆՍի-Ալֆա» ընկերությունների ամրակցված լայնաշերտ ինտերնետի բոլոր բաժանորդները օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետ ծառայությունների բաժանորդներ են, «Տելեկոմ Արմենիա» ընկերության դեպքում ամրակցված լայնաշերտ ինտերնետի բաժանորդների 67,1%-ն է հանդիսանում օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետից օգտվող, իսկ ամրակցված լայնաշերտ ինտերնետ ծառայություններ մատուցող մյուս օպերատորների դեպքում՝ 88,3%-ը: Հատկանշական է, որ 2020-2025 թվականների ընթացքում բոլոր օպերատորների մոտ շարունակաբար աճում են թե օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետի բաժանորդների քանակը (ավելի քան 3-ից 4 անգամ), և թե տեսակարար կշիռները (2-ից 3,6 անգամ)՝ ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետի բաժանորդների քանակում (դիագրամները՝ ստորև):

**Օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետի բաժանորդների տեսակարար կշիռը ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետի բաժանորդների քանակում՝ ըստ օպերատորների (%)**



2025 թվականի տարեվերջի դրությամբ ընդհանուր ամրակցված լայնաշերտ (ներառյալ՝ օպտիկամանրաթելային հասանելիությամբ) ինտերնետ ծառայությունների շուկայում գերակշռում են «Յուբոմ» ընկերության բաժանորդները (շուրջ 149,3 հազար՝


շուկայի շուրջ ¼-ը), իսկ օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետի բաժանորդների առավել մեծ աճ, նախորդ տարվա ընթացքում, արձանագրվել է «Տելեկոմ Արմենիա» ընկերության կողմից (ավելի քան 9,9 հազար):

Ընդհանուր ամրակցված լայնաշերտ (ներառյալ՝ օպտիկամանրաթելային հասանելիությամբ) ինտերնետի բաժանորդների 3,8%-ը կազմում են իրավաբանական անձինք (շուրջ 24 հազար, որից 21,3 հազարը՝ օպտիկամանրաթելային հասանելիության), իսկ 96.2%-ը՝ ֆիզիկական անձինք (շուրջ 601 հազար, որից 535,9 հազարը՝ օպտիկամանրաթելային հասանելիության):


Ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետի իրավաբանական անձ հանդիսացող /ԲԻՋՆԵՍ/ բաժանորդների քանակը 2024 թվականի տարեվերջի համեմատ աճել է 10,5%-ով, իսկ ֆիզիկական անձ հանդիսացող բաժանորդների քանակը՝ 3,2%-ով:

Օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետի իրավաբանական անձ հանդիսացող /ԲԻՋՆԵՍ/ բաժանորդների քանակը 2024 թվականի տարեվերջի համեմատ աճել է 13,5%-ով, իսկ ֆիզիկական անձ հանդիսացող բաժանորդների քանակը՝ 7,1%-ով: Դիագրամները բերված են ստորև.



**Ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետի բաժանորդների քանակը՝ ըստ բաժանորդների տեսակի**




**Օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետի բաժանորդների քանակը՝ ըստ բաժանորդների տեսակի**




**Ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետի իրավաբանական անձ /ԲԻԶՆԵՍ/ բաժանորդների քանակը՝ ըստ օպերատորների և նրանց մասնաբաժինների (%)**



**Օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետի իրավաբանական անձ /ԲԻԶՆԵՍ/ բաժանորդների քանակը՝ ըստ օպերատորների և նրանց մասնաբաժինների (%)**






Ընդհանուր ամրակցված լայնաշերտ (ներառյալ՝ օպտիկամանրաթելային հասանելիությամբ) ինտերնետի իրավաբանական անձ /ԲԻՉՆԵՍ/ բաժանորդների մեջ գերակշռում են «Յուքոմ» ընկերության բաժանորդները (շուրջ 10,6 հազար՝ շուկայի 44-ից 49.7%-ը), իսկ 2025 թվականի ընթացքում օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետի իրավաբանական անձ /ԲԻՉՆԵՍ/ բաժանորդների առավել մեծ աճ արձանագրել է «Տելեկոմ Արմենիա» ընկերությունը (813 տնտեսվարող):

Հանրապետության մարզերում ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետի և օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետի բաժանորդների թվաքանակները նախորդ տարվա համեմատ աճել են համապատասխանաբար 3.8 % և 7 %-ով, իսկ Երևան քաղաքում՝ 3.1 % և 7.7 %-ով: Այսինքն՝ ամրակցված լայնաշերտ (ներառյալ՝ օպտիկամանրաթելային հասանելիությամբ) ինտերնետի բաժանորդների աճի դինամիկան մարզային բնակավայրերում և Երևանում համադրելի է, ինչը հանրապետությունում ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության համաչափ զարգացման դրական ցուցիչ է: Զուգահեռաբար, 2024 թվականի համեմատ, թե մարզային բնակավայրերում, և թե Երևանում շարունակաբար աճում են նաև օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետի բաժանորդների կշիռներն ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետի բաժանորդների մեջ: Ընդ որում, 2022-2025 թվականներին մարզերում այդ կշռի աճն էապես ավելին է (75.1%-ից 88.9%), քան Երևանում (82.7%-ից 89.5%):

**Օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետի բաժանորդների կշիռը ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետի բաժանորդների մեջ մարզերում և Երևանում (%)**




Հանրապետության մարզային բնակավայրերի և Երևան քաղաքի բնակչության հարաբերակցության (62,5%/37,5%) համատեքստում պետք է նկատել, որ վերջին տարիներին մարզային բնակավայրերում ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության զարգացման դրական դինամիկայով պայմանավորված՝ ամրակցված լայնաշերտ (ներառյալ՝ օպտիկամանրաթելային հասանելիության) ինտերնետի բաժանորդների թվաքանակի մեջ շարունակաբար աճում է մարզային բնակավայրերի բաժանորդների կշիռը, որի արդյունքում ամրակցված լայնաշերտ ինտերնետի բաժանորդների բաշխվածությունը մարզային բնակավայրերում և Երևանում կազմում է 56,5%/43,5%: Նշված հանգամանքն ու 2024-2025 թվականներին մարզերում և Երևանում ամրակցված լայնաշերտ ինտերնետի (ներառյալ՝ օպտիկամանրաթելային հասանելիության) բաժանորդների, դրանցում մարզային բնակավայրերի բաժանորդների կշռի և մարզերում դրանց աճերի տեմպերը վկայում են վերջին տարիներին հանրապետությունում (Երևանում և մարզերում) ամրակցված լայնաշերտ ինտերնետի հասանելիության համաչափ զարգացման և համադրելի բաշխվածության դրական դինամիկայի մասին:



**Ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետի բաժանորդների բաշխվածությունը մարզերում և Երևանում (բաժանորդների քանակ և հարաբերակցություն)**




**Օպտիկամանրաթելային հասանելիության ինտերնետի բաժանորդների բաշխվածությունը մարզերում և Երևանում (բաժանորդների քանակ և հարաբերակցություն)**



**Ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետի բաժանորդների բաշխվածությունը մարզերում և Երևանում (ըստ օպերատորների) և շուկայի մասնաբաժինները (%)**



**Օպտիկամանրաթելային հասանելիության ինտերնետի բաժանորդների բաշխվածությունը մարզերում և Երևանում (ըստ օպերատորների) և շուկայի մասնաբաժինները (%)**




2025 թվականի տարեվերջի դրությամբ հանրապետության մարզերում ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետի առավել մեծ թվով բաժանորդներ ունի «Տելեկոմ Արմենիա» ընկերությունը (շուրջ 41,6 հազար կամ շուկայի 11,8%-ը), իսկ օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետ ծառայությունների առավել մեծ թվով բաժանորդներ՝ «Արփինետ» ընկերությունը (շուրջ 40 հազար կամ շուկայի 12,7%-ը):

Երևանում ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետ ծառայությունների (ներառյալ՝ օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետի) բաժանորդների թվի մեջ գերակշռում են «Յուբոմ» ընկերության (շուրջ 117,2 հազար, կամ տվյալ շուկաների 43,1% և 48,2%) բաժանորդները:

Նախորդ տարվա ընթացքում հանրապետության մարզերում ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետ ծառայությունների առավել մեծ թվով բաժանորդներ ներգրավել է «Յուբոմ» ընկերությունը (շուրջ 3,1 հազար), իսկ օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետի առավել մեծ թվով բաժանորդներ՝ «Տելեկոմ Արմենիա» ընկերությունը (շուրջ 7,5 հազար): Երևանում՝ ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետ (ներառյալ՝ օպտիկամանրաթելային

հասանելիության) ծառայությունների առավել մեծ թվով բաժանորդներ ներգրավվել են «Յուքոմ» ընկերության կողմից (շուրջ 2,4 հազար):

**Ամրակցված կապի ինտերնետ հասանելիության ծառայություններից օգտվող մեկ բաժանորդին ընկնող միջին ամսական հասույթների (ARPU)**



### Այսպիսով՝


- 2025 թվականի տարեվերջի դրությամբ ընդհանուր ամրակցված լայնաշերտ (ներառյալ՝ օպտիկամանրաթելային հասանելիությամբ) ինտերնետ ծառայությունների, ինչպես նաև տվյալ ծառայությունների իրավաբանական անձ /ԲԻՉՆԵՍ/ բաժանորդների առավել մեծ բաժանորդային բազա ունի «Յուքոմ» ընկերությունը,
- նախորդ տարվա ընթացքում օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետի՝ ներառյալ իրավաբանական անձ /ԲԻՉՆԵՍ/ հանդիսացող բաժանորդների առավել մեծ աճ գրանցել է «Տեղեկում Արմենիա» ընկերությունը,
- հանրապետության մարզերում ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետի բաժանորդների մեջ առավել մեծ թիվ են կազմում «Տեղեկում Արմենիա» ընկերության, իսկ օպտիկամանրաթելային հասանելիությամբ ինտերնետի բաժանորդների մեջ՝ «Արփինետ» ընկերության բաժանորդները,
- ամրակցված կապի լայնաշերտ ինտերնետ ծառայությունների շուկայի բոլոր սեգմենտներում «ՋիԷնՍի-Ալֆա» ընկերությունը շարունակաբար պահպանում է իր մրցակցային դիրքը,

➤ ընդհանուր ամրակցված լայնաշերտ ինտերնետի (ներառյալ՝ օպտիկամանրաթելային հասանելիությամբ) բաժանորդների տեսակարար կշռում շարունակաբար աճում են ամրակցված լայնաշերտ ինտերնետ ծառայությունների մատուցող և տվյալ շուկայում առավել փոքր մասնաբաժիններ ունեցող օպերատորների մասնաբաժինները:


Անփոփելիվ, ամրակցված կապի լայնաշերտ ինտերնետ ծառայությունների շուկայի զարգացման վերը նկարագրված միտումները, շուկայում առավել փոքր մասնաբաժին ունեցող օպերատորների մասնաբաժինների աճի դինամիկան, ինչպես նաև տվյալ շուկայի տարբեր սեգմենտներում ամրակցված կապի տարբեր օպերատորների առաջատար կամ մրցունակ դիրքերը վկայում են նշված շուկայում առկա արդյունավետ մրցակցության, դինամիկ զարգացող մրցակցային միջավայրի, իսկ հանրապետությունում (այդ թվում՝ առանձին վերցված Երևանում և մարզերում) ամրակցված լայնաշերտ ինտերնետի ծավալների, դրանցում օպտիկամանրաթելային տեխնոլոգիայի կշիռների աճի տեմպերը՝ հանրապետությունում (Երևանում և մարզերում) ամրակցված լայնաշերտ ինտերնետի հասանելիության համաչափ զարգացման տեմպերի՝ նորագույն տեխնոլոգիաների կիրառման, ծառայությունների հասանելիության ընդլայնման արդյունավետության մասին:

➤ 2025 թվականին հանրապետությունում ընդհանուր (ամրակցված և շարժական կապ) լայնաշերտ ինտերնետի օգտագործման ծավալը կազմել է 4,42 Էկզաբայթ՝ (նախորդ տարվա համեմատ աճելով 21,4%-ով, իսկ 2020-2025 թվականների կտրվածքով՝ ավելի քան 100%-ով), այդ թվում՝ ամրակցված լայնաշերտ ինտերնետինը՝ 3,86 Էկզաբայթ (աճելով 20,6%-ով, իսկ 2020-2025 թվականների կտրվածքով շուրջ 84%-ով), իսկ շարժական լայնաշերտ ինտերնետինը՝ 0,56 Էկզաբայթ (աճելով 24,4%-ով, իսկ 2020-2025 թվականների կտրվածքով շուրջ 230%-ով կամ 3,3 անգամ), ինչը կանխատեսվել էր հանձնաժողովի 2025 թվականի գործունեության ծրագրով: Ընդհանուր (ամրակցված և շարժական կապ) լայնաշերտ ինտերնետի կապի օգտագործման ծավալի 87,3%-ը կազմում է ամրակցված լայնաշերտ ինտերնետի, իսկ 12,7%-ը՝ շարժական լայնաշերտ ինտերնետի օգտագործման ծավալները:


**Ընդհանուր (ամրակցված և շարժական կապ) լայնաշերտ ինտերնետի օգտագործման ծավալները (էկզաբայթ)**




**Ամրակցված և շարժական լայնաշերտ ինտերնետի օգտագործման կշիռները (հարաբերակցությունը, %)**




**Ընդհանուր (ամրակցված և շարժական կապ) լայնաշերտ ինտերնետի օգտագործման ծավալները՝ ըստ օպերատորների (էկզաբայթ) և օգտագործման ծավալում օպերատորների կշիռը (%)**







Ընդհանուր (ամրակցված և շարժական կապ) լայնաշերտ ինտերնետի օգտագործման ընդհանուր ծավալում առավել մեծ մասնաբաժին են կազմում «Յուրօմ» և «Տեղեկում Արմենիա» ընկերությունների բաժանորդների կողմից օգտագործված ինտերնետի ընդհանուր ծավալները՝ ընդհանուր 0,95 էկզաբայթ (շուրջ 21,5%-ը):

**Ամրակցված (լարային) լայնաշերտ ինտերնետի օգտագործված ծավալները (էկզաբայթերով) 2015-2025 թվականներ**




**Ամրակցված լայնաշերտ ինտերնետի օգտագործման ծավալները՝ ըստ օպերատորների (էկզաբայթ) և օգտագործման ծավալում օպերատորների կշիռը (%)**







Ամրակցված լայնաշերտ ինտերնետի օգտագործման ընդհանուր ծավալում առավել մեծ մասնաբաժին է կազմում «Տելեկոմ Արմենիա» ընկերության բաժանորդների կողմից օգտագործված ամրակցված լայնաշերտ ինտերնետի ընդհանուր ծավալը՝ ընդհանուր 0,9 էկզաբայթ (22,8%-ը):

**Շարժական լայնաշերտ ինտերնետի օգտագործված ծավալները (էկզաբայթերով)**



**Շարժական լայնաշերտ ինտերնետի օգտագործման ծավալները՝ ըստ օպերատորների (էկզաբայթ) և օգտագործման ծավալներում օպերատորների կշիռը (%)**







Շարժական լայնաշերտ ինտերնետի օգտագործման ընդհանուր ծավալում առավել մեծ մասնաբաժին է կազմում «Վիվա Արմենիա» ընկերության բաժանորդների կողմից օգտագործված շարժական լայնաշերտ ինտերնետի ընդհանուր ծավալը՝ ընդհանուր 0,35 էկվաբայթ (62,5%-ը):

➤ 2025 թվականի տարեվերջի դրությամբ միջազգային «ԱՅՓԻ» տարանցման հոսքերի թողունակությունը հանրապետությունում կազմել է շուրջ 1042 Գբիթ/վ, որն աճել է 5%-ով, ինչով պայմանավորված՝ 4,5%-ով նվազել է 1 Մբիթ/վ արագությամբ տարանցիկ «ԱՅՓԻ» հոսքի միջին շուկայական (մեծածախ) գինը՝ կազմելով 420 դրամ (դիագրամները՝ ստորև):

Միջազգային IP տարանցման ծառայության հոսքերի թողունակությունը (Գբիթ/վ)



**Միջազգային IP տարանցման ծառայության սակագների դինամիկան  
(1Մբիթ/վ/դրամ)**



**5. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն**

Կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար, ինչպես նաև հնարավորություն են տալիս ձևավորել կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների համապատասխան վիճակագրական բազա:

2025 թվականի ընթացքում էներգետիկայի բնագավառի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունները, «Հայփոստ», «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական և «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերությունները հանձնաժողովի սահմանած ձևերով և պարբերականությամբ ներկայացրել են ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել է վերջիններիս ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերլուծություն:

Երաշխավորված մատակարարի հետ էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայում պայմանագիր կնքած սպառողների կողմից սպառված էլեկտրաէներգիայի դիմաց գումարների հավաքագրման և էլեկտրաէներգետիկական համակարգի արտադրող կայաններին և ծառայություններ մատուցող ընկերություններին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սահմանված կարգով և ժամկետներում վճարումների գործընթացը վերահսկելու

նպատակով հանձնաժողովն ամսական արդյունքներով ստացել, վերլուծել և ամփոփել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության հատուկ հաշիվներում դրամական միջոցների շարժի վերաբերյալ տեղեկատվությունը:

Պայմանավորված այն հանգամանքով, որ 2025 թվականի մայիսի 15-ից շահագործման փուլ է անցել արդյունաբերական նշանակության «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանը՝ 55 ՄՎտ հզորությամբ, համապատասխան փոփոխություն է կատարվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության, էլեկտրաէներգետիկական համակարգի 30 ՄՎտ և ավելի տեղակայված հզորությամբ արտադրող և էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկային ծառայություններ մատուցող ընկերությունների միջև կնքված գրավի պայմանագրում՝ գրավառուների ցանկում ավելացնելով նաև «ԷֆԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությանը, ինչի արդյունքում՝ սպառողներից հավաքագրված գումարները, ի թիվս մյուս գրավառուների, ամսական արդյունքներով գրավադրվում են նաև «ԷֆԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերության օգտին՝ մինչև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից նաև վերջինիս նկատմամբ առկա պարտավորությունների ամբողջական կատարումը: Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների 214-րդ կետի համաձայն՝ գրավի պայմանագրում լրացում կատարելու վերաբերյալ համաձայնագիրը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացվել է հանձնաժողովի համաձայնեցմանը, որին հանձնաժողովը համաձայնություն է տվել 2025 թվականի հուլիսի 14-ի N248-Ա որոշմամբ:

Միաժամանակ, էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում հաշվեկշռման ծառայություն մատուցող արտադրողի («Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն) հատուկ հաշվում դրամական միջոցների մուտքերի և ելքերի շրջանառության, ինչպես նաև վերջինիս կողմից երկրորդային և երրորդային պահուստ ապահովող արտադրողներից («ՀրազԶԷԿ» բաց բաժնետիրական ընկերություն և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Հրազդան-5» կայան) ձեռքբերված հզորության (էլեկտրական էներգիայի) դիմաց վճարումների կատարման ժամկետների նկատմամբ՝ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններով սահմանված կարգավորումներին համապատասխանությունը վերահսկելու նպատակով, հանձնաժողովն ամսական արդյունքներով ստացել, վերլուծել և ամփոփել է նաև «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական

ընկերության հատուկ հաշիվներում դրամական միջոցների շարժի վերաբերյալ տեղեկատվությունը:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով 2025 թվականին ևս ամփոփվել է հիշյալ ընկերությունների կողմից ներկայացվող տեխնիկատնտեսական տեղեկատվությունը և հրապարակվել հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:


## 6. Սպառողների շահերի պաշտպանություն

### 6.1. Սպառողների դիմումների քննարկում

Հանձնաժողովը, հավատարիմ մնալով սպառողներին հուզող հարցադրումներին պատշաճ պարզաբանումներ, իսկ դիմում-բողոքներին՝ առավել արդյունավետ լուծումներ առաջարկելու իր որդեգրած քաղաքականությանը, 2025 թվականին ևս՝ սպառողներից ստանալով հանրային ծառայությունների ոլորտում հնարավոր իրավախախտման վերաբերյալ դիմում-բողոքներ, դրանք քննարկել է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:


Հաշվետու տարում հանձնաժողով է ներկայացվել 3460 դիմում-բողոք, որոնցից 1906-ը (55%)՝ գրավոր, իսկ 1554-ը (45%)՝ բանավոր:

Ստորև ներկայացված է հանձնաժողով ներկայացրած դիմում-բողոքների թվաքանակի դինամիկան՝ 2021-2025 թվականների արդյունքներով:



**2025 թվականին հանձնաժողով գրավոր եղանակով ներկայացված 1906 դիմում-բողոքներից 962-ը (51%) վերաբերել են խմելու ջրի մատակարարմանը, 809-ը (42%)՝ էլեկտրական էներգիայի մատակարարմանը, 81-ը (4%)՝ բնական գազի մատակարարմանը և 54-ը (3%)՝ հեռահաղորդակցության ոլորտին:**

Ստորև ներկայացված է 2025 թվականին հանձնաժողով գրավոր եղանակով ներկայացված դիմում-բողոքների տոկոսային հարաբերակցության դիագրամը:



Ջրամատակարարման ոլորտին առնչվող 962 գրավոր դիմում-բողոքները, ըստ հիմնախնդրի բնույթի, ունեն հետևյալ բաշխվածությունը.

- 289-ը (30%)՝ ջրամատակարարման պլանային, վթարային (կամ ֆորսմաժորային իրավիճակներում) ընդհատումների (գրաֆիկի) և վերականգնման մասին,
- 224-ը (23.3%)՝ առևտրային հաշվառքի սարքի խախտման մասին (վերահաշվարկ),
- 178-ը (18.5%)՝ նորմերով սահմանված պահանջներին համապատասխան ճնշմամբ խմելու ջուր ապահովելու մասին,
- 104-ը (10.8%)՝ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի մասին (դիտահորի, կոյուղագծերի խցանում, ջրագծերի վթար և այլն),
- 67-ը (7%)՝ մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի մասին,
- 36-ը (3.8%)՝ նոր միացման կամ կատարված միացման փոփոխության մասին,

- 9-ը (0.9%)՝ ծառայությունների մատուցման դադարեցման, վերականգնման մասին,
- 55-ը (5.7%)՝ այլ բնույթի:

Էլեկտրամատակարարման ոլորտին առնչվող 809 գրավոր դիմում-բողոքները, ըստ հիմնախնդրի բնույթի, ունեն հետևյալ բաշխվածությունը.

- 276-ը (34.1%)՝ մատակարարվող էլեկտրաէներգիայի որակի ցուցանիշների ապահովման մասին (լարման շեղումներ և տատանումներ),
- 236-ը (29.2%)՝ սպառման համակարգի նոր միացման կամ կատարված միացման փոփոխությունների մասին,
- 115 (14.2%)՝ էլեկտրամատակարարման պլանային, վթարային (կամ ֆորսմաժորային իրավիճակներում) ընդհատումների (գրաֆիկի) և վերականգնման մասին,
- 26-ը (3.2%)՝ մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի մասին,
- 18-ը (2.2%)՝ էլեկտրամատակարարման դադարեցման, վերականգնման մասին,
- 4-ը (0.5%)՝ առևտրային հաշվառքի սարքի խախտման մասին,
- 134-ը (16.6%)՝ այլ բնույթի:

Գազամատակարարման ոլորտին առնչվող 81 գրավոր դիմում-բողոքները, ըստ հիմնախնդրի բնույթի, ունեն հետևյալ բաշխվածությունը.


- 31-ը (38.3%)՝ գազամատակարարման դադարեցման և վերականգնման մասին,
- 18-ը (22.2%)՝ առևտրային հաշվառքի սարքի խախտման մասին,
- 8-ը (9.9%)՝ ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման մասին,
- 5-ը (6.2%)՝ վճարման ենթակա գազի արժեքի մասին,
- 19-ը (23.4%)՝ այլ բնույթի:

Հեռահաղորդակցության ոլորտին առնչվող 54 գրավոր դիմում-բողոքները, ըստ հիմնախնդրի բնույթի, ունեն հետևյալ բաշխվածությունը.

- 14-ը (25.9%)՝ ներկայացված վճարման հաշիվների մասին,
- 9-ը (16.7%)՝ ծառայության որակի մասին,
- 3-ը (5.6%)՝ պայմանագիրը լուծելու (գործողության դադարեցման) մասին,
- 28-ը (51.8%)՝ այլ բնույթի:

**2025 թվականին հանձնաժողով բանավոր եղանակով** ներկայացված 1554 դիմում-բողոքներից 912-ը (59%) վերաբերել են խմելու ջրի մատակարարմանը, 495-ը (32%)՝ էլեկտրական էներգիայի մատակարարմանը, 63-ը (4%)՝ բնական գազի մատակարարմանը և 84-ը (5%)՝ հեռահաղորդակցության ոլորտին:

Ստորև ներկայացված է 2025 թվականին հանձնաժողով բանավոր եղանակով ներկայացված դիմում-բողոքների տոկոսային հարաբերակցության դիագրամը:



Ջրամատակարարման ոլորտին առնչվող 912 բանավոր դիմում-բողոքները, ըստ հիմնախնդրի բնույթի, ունեն հետևյալ բաշխվածությունը.

- 445-ը (48.8%)՝ ջրամատակարարման պլանային, վթարային (կամ ֆորսմաժորային իրավիճակներում) ընդհատումների (գրաֆիկի) և վերականգնման մասին,
- 265-ը (29.1%)՝ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի մասին (դիտահորի, կոյուղագծերի խցանում, ջրագծերի վթար և այլ),
- 78-ը (8.5%)՝ նորմերով սահմանված պահանջներին համապատասխան ճնշմամբ խմելու ջուր ապահովելու մասին,
- 40-ը (4.4%)՝ առևտրային հաշվառքի սարքի խախտման մասին (վերահաշվարկ),
- 21-ը (2.3%)՝ մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի մասին,
- 11-ը (1.2%)՝ նոր միացման կամ կատարված միացման փոփոխության մասին,
- 2-ը (0.2%)՝ ծառայությունների մատուցման դադարեցման մասին,
- 50-ը (5.5%)՝ այլ բնույթի:

Էլեկտրամատակարարման ոլորտին առնչվող 495 բանավոր դիմում-բողոքները, ըստ հիմնախնդրի բնույթի, ունեն հետևյալ բաշխվածությունը.

- 166-ը (33.5%)՝ էլեկտրամատակարարման պլանային, վթարային (կամ ֆորսմաժորային իրավիճակներում) ընդհատումների (գրաֆիկի) և վերականգնման մասին,
- 127-ը (25.7%)՝ մատակարարվող էլեկտրաէներգիայի որակի ցուցանիշների ապահովման մասին (լարման շեղում, տատանումներ),
- 39-ը (7.9%)՝ էլեկտրամատակարարման դադարեցման մասին,
- 24-ը (4.9%)՝ մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի մասին,
- 15-ը (3%)՝ սպառման համակարգի նոր միացման կամ կատարված միացման փոփոխությունների մասին,
- 4-ը (0.8%)՝ առևտրային հաշվառքի սարքի խախտման մասին,
- 120-ը (24.2%)՝ այլ բնույթի դիմում-բողոքներ:

Գազամատակարարման ոլորտին առնչվող 63 բանավոր դիմում-բողոքները, ըստ հիմնախնդրի բնույթի, ունեն հետևյալ բաշխվածությունը.


- 21-ը (33.3%)՝ գազամատակարարման դադարեցման և վերականգնման մասին,
- 4-ը (6.3%)՝ նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման կամ կատարված միացման փոփոխության մասին,
- 4-ը (6.3%)՝ գազամատակարարման պլանային, վթարային (կամ ֆորսմաժորային իրավիճակներում) ընդհատման մասին,
- 3-ը (4.8%)՝ վճարման ենթակա գազի արժեքի մասին,
- 2-ը (3.2%)՝ առևտրային հաշվառքի սարքի խախտման մասին,
- 1-ը (1.6%)՝ ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման մասին,
- 28-ը (44.5%)՝ այլ բնույթի:

Հեռահաղորդակցության ոլորտին առնչվող 84 բանավոր դիմում-բողոքները, ըստ հիմնախնդրի բնույթի, ունեն հետևյալ բաշխվածությունը.

- 16-ը (19.1%)՝ ներկայացված վճարման հաշիվների մասին,
- 12-ը (14.3%)՝ ծառայության որակի մասին,
- 7-ը (8.3%)՝ պայմանագիրը լուծելու (գործողության դադարեցման) մասին,


- 49-ը (58.3%)՝ այլ բնույթի:

2025 թվականին գրավոր եղանակով ներկայացված 1906 դիմում-բողոքից 364-ը բավարարվել է, 494-ը մասամբ է բավարարվել, 1 դիմում-բողոքի դեպքում դիմող անձը խնդրել է դադարեցնել հետագա ընթացքը՝ հայտնելով խնդրի կարգավորման մասին, 31-ը վերահասցեագրվել է այլ իրավասու մարմիններին, 55 դիմում-բողոք ներկայացվել է ոչ շահագրգիռ անձի կողմից՝ առանց լիազորագրի, 3 դիմում-բողոքով ներկայացված հարցերի քննարկումը դուրս է եղել հանձնաժողովի իրավասություններից, իսկ 958 դիմում-բողոքի դեպքում տրվել են համապատասխան տեղեկատվություն կամ պարզաբանումներ:



2025 թվականին բանավոր եղանակով ներկայացված 1554 դիմում-բողոքից 30-ով բարձրացված խնդիրները կարգավորվել են, 575-ի դեպքում տրվել է պարզաբանում, 543 դիմում-բողոքի դեպքում առաջարկվել է գրավոր դիմել հանձնաժողով, 104-ի դեպքում՝ կարգավորվող ընկերություններին, 33-ի դեպքում՝ այլ

իրավասու կառույցների, քանի որ ներկայացված հարցերի քննարկումը դուրս է եղել հանձնաժողովի իրավասությունների շրջանակից, 244 դիմում-բողոքի դեպքում դիմող անձանց տրվել է անհրաժեշտ տեղեկատվություն, իսկ 25 դիմում-բողոքի դեպքում դիմող անձանց հետ հնարավոր չի եղել հետադարձ կապ հաստատել:



Հանձնաժողովում գործող՝ դիմում-բողոքների քննարկման համար նախատեսված հեռախոսահամարով, ինչպես նաև հանձնաժողով այցելելով՝ բնակիչ-սպառողները և կազմակերպությունների ներկայացուցիչները խորհրդատվություն են ստացել մատակարար-սպառող հարաբերություններում իրենց իրավունքների և պարտականությունների, դրանց խախտման դեպքում՝ անհրաժեշտ քայլերի և գործողությունների վերաբերյալ:

2025 թվականի ընթացքում հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքների վերլուծությունների արդյունքները հաշվի են առնվել բնական գազի մատակարարման

և օգտագործման, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների, էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնների, էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնների լրամշակման ընթացքում, իսկ դիմում-բողոքների քննարկման ընթացքի վերաբերյալ տարեկան տեղեկատվությունը հրապարակվել է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Սպառողը հնարավորություն է ունեցել նաև անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի «Տեղեկություն սպառողին» և «Հարց ու պատասխան» բաժիններից: Սպառողի իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի «Հարց ու պատասխան» բաժնում թարմացվել են դիմող անձանց կողմից հաճախակի տրվող հարցերը և դրանց պատասխանները:

Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում ծառայությունների մատուցմանն առնչվող գրավոր և բանավոր եղանակներով ներկայացված դիմում-բողոքների սահմանված կարգով և ժամկետներում քննարկումը, որպես սպառողների սպասարկման որակի ցուցանիշ, մշտապես վերահսկվում է հանձնաժողովի կողմից:

## **6.2. Սպասարկման որակի ցուցանիշներ**

Սպառողներին անհանգստացնող խնդիրների շարքում իր կարևորությամբ առանձնանում է կարգավորվող ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների սպասարկման որակի սահմանված ցուցանիշների ապահովումը: Նշված գործընթացը մշտապես գտնվում է հանձնաժողովի ուշադրության առանցքում՝ ինչպես կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվությունների վերլուծության և հանձնաժողովի կողմից տեղում իրականացվող մոնիթորինգի, այնպես էլ սպառողների դիմում-բողոքների ուսումնասիրության միջոցով:

Մասնավորապես, հանձնաժողովն էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերություններից սպառողների սպասարկման որակի փաստացի ցուցանիշների վերաբերյալ եռամսյակային պարբերականությամբ ստացված տեղեկատվության, ինչպես նաև սպառողների դիմում-բողոքների ուսումնասիրության հիման վրա մշտական դիտարկման է ենթարկում՝

- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների՝ սպառողների մատակարարման ընդհատումների քանակի և տևողության ցուցանիշները,
- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների դիմումներին, բողոքներին և հարցադրումներին պատասխանելու ժամկետները,
- սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշները,
- առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից կատարված վերահաշվարկները և հաշվարկված տույժերը,
- նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին, նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգը գազամատակարարման համակարգին, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացման կամ միացման փոփոխության գործընթացներում սահմանված ժամկետների խախտումները և դրանց պատճառները:

Բաշխման ցանցից սպառողներին առաքված և առևտրային հաշվառման սարքերով գրանցված էլեկտրաէներգիայի քանակի և որակի վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով հանձնաժողովի նախագահի 2025 թվականի հունվարի 22-ի N028-ՀՆ հրամանով ստեղծված աշխատանքային խումբը 2025 թվականի փետրվարի 3-14-ը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Գեղամա», «Արաքս», «Նաիրի» և «Մուսալեռ» մասնաճյուղերում իրականացրել է սպառողներին մատակարարված և առևտրային հաշվառքի սարքերով գրանցված էլեկտրաէներգիայի քանակի և որակի վերաբերյալ կարճաժամկետ մոնիթորինգ, որի շրջանակում իրականացվել է թվով 732 սպառողների առևտրային հաշվառքի սարքերի զննում և փաստացի ցուցմունքների գրանցում: Մոնիթորինգի շրջանակում պարզվել է, որ բաշխողի էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում (ԲԷԱՀ) գործող՝ թվով 200 էլեկտրոնային հաշվիչներ չեն գրանցում նախորդ հաշվարկային ամսվա ծախսը (Pr), 140 էլեկտրոնային հաշվիչներ ունեն ժամային շեղում, 28 էլեկտրոնային հաշվիչներ

արտացոլում են սխալ ամսաթիվ, ակնադիտական զննում անցած՝ թվով 69 էլեկտրոնային հաշվիչներ ցույց են տալիս լարման ցուցանիշներից շեղումներ, իսկ ԲԷԱՀ համակարգից դուրս բերված 49 եռաֆազ հաշվիչներ չեն գրանցում մատակարարվող էլեկտրական էներգիայի լարման մակարդակը և հզորության գործակիցը ( $\cos \varphi$ ), թվով 15 էլեկտրոնային հաշվիչների վրա արձանագրված՝ ըստ ժամային տիրույթների ցուցմունքները չեն համապատասխանում ընկերության աշխատակիցների կողմից 2025 թվականի փետրվարի 1-3-ն ընկած ժամանակահատվածում գույքագրված ցուցմունքներին, թվով 7 հաշվիչների վրա բացակայում են սեղմակաշարերի կափարիչները, հետևաբար՝ նաև կնիքները, իսկ 25 հաշվիչների սեղմակաշարերի կափարիչները կնքված չեն, թվով 126 առևտրային հաշվիչների անհատական արկղերը չունեն կողպեքներ, 5 առևտրային հաշվիչների արկղերը կոտրված են, իսկ 38 առևտրային հաշվիչների արկղերում տեսանելիությունն ապահովված չէ և այլն: Մոնիթորինգի արձանագրության հիման վրա, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնների և Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնների պահանջների հնարավոր խախտման փաստերի ուսումնասիրության նպատակով, 2025 թվականի մարտի 27-ից ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի արդյունքում վերջինիս նկատմամբ կիրառվել է տուգանք՝ 10,0 միլիոն դրամ գումարի չափով:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ էներգետիկայի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 2025 թվականի հուլիսի 15-ին հանձնաժողով ներկայացված հաղորդման հիման վրա՝ հանձնաժողովի նախագահի 2025 թվականի հուլիսի 18-ի «Վարչական վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառում կիրառելու մասին» N1-Ա որոշմամբ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ և նշանակվել է ընկերության ժամանակավոր կառավարիչ: Վարույթի շրջանակում, հանձնաժողովի նախագահի համապատասխան հրամաններով ստեղծված աշխատանքային խմբերը «Հայաստանի էլեկտրական

ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության գլխամասում և սպասարկման տարածքներում իրականացրել են մոնիթորինգ՝ ստորև նշված ուղղություններով: Մասնավորապես, հաշվի առնելով, որ լիազոր մարմնի կողմից ներկայացված հաղորդման շրջանակում նշվել է՝

➤ էլեկտրական ցանցին միացման ժամկետների համատարած խախտումների մասին, հանձնաժողովի աշխատակազմն իրականացրել է հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի N274-Ա որոշման համաձայն ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված՝ նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վերաբերյալ տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում վերհանված՝ 2025 թվականի 1-ին եռամսյակի դրությամբ չմիացված կամ ժամկետի խախտմամբ միացված սպառման համակարգերի ժամկետների խախտման պատճառների վերաբերյալ հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հավաստիության մոնիթորինգ, որի շրջանակում ուսումնասիրվել են այն միացման ժամկետների խախտումների դեպքերը, որոնք ընկերությունը պայմանավորել էր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գործողություններով կամ անգործությամբ, ինչը ներառում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հետագիծ-նախագծային փաստաթղթերի հաստատում, շինարարության թույլտվության տրամադրում, տեսչական մարմնի կողմից էլեկտրատեղակայանքների գործարկման եզրակացության տրամադրում և այլն.

➤ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից հանձնաժողով ներկայացվող՝ սպառողներին մատուցվող ծառայությունների սպասարկման որակի վերաբերյալ տեղեկատվության հավաստիության հավանական խախտումների մասին՝ հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունների հավաստիությունը ուսումնասիրելու նպատակով, վարչական վարույթի շրջանակում հանձնաժողովի աշխատակազմը 2025 թվականի օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում՝ ընկերության գլխամասում, «Գեղամա» և «Մուսալեռ» մասնաճյուղերում իրականացրել է ընկերության կողմից սպառողների էլեկտրամատակարարման ընդհատումների քանակի և տևողության ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հավաստիության կարճաժամկետ մոնիթորինգ, որի շրջանակում իրականացվել է ընկերության

բաժանորդական բազայում առկա՝ սպառողների հաշվառման քարտերում նշված էլեկտրամատակարարման ընդհատումների մասին տվյալների համեմատություն և ընկերության բաժանորդների (սպառողների) սպասարկման տեղեկատվական զանգերի կենտրոնի (1-80) ձայնագրությունների ուսումնասիրությամբ դուրս բերված՝ սպառողների բաժանորդային քարտի տվյալներով էլեկտրամատակարարման ընդհատումների վերաբերյալ տեղեկատվության համադրում կարգավարական ծառայությունների օպերատիվ մատյաններում գրանցված տվյալների և հանձնաժողով ներկայացված՝ սպառողների էլեկտրամատակարարման ընդհատումների մասին 2024 թվականի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 2025 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների տեղեկատվությունում նշված տվյալների հետ: Ընդհանուր առմամբ իրականացվել է ընտրանքային կարգով 1450 ընդհատման դեպքերի ուսումնասիրություն:

➤ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից հանձնաժողով ներկայացվող՝ կատարված ներդրումների վերաբերյալ տեղեկատվության հավաստիության հավանական խախտումների մասին, հանձնաժողովի աշխատակազմը 2025 թվականի սեպտեմբերի 16-29-ն ընկած ժամանակահատվածում՝ Երևան քաղաքում, Կոտայքի, Արագածոտնի և Արմավիրի մարզերում իրականացրել է ընկերության 2021, 2023 և 2024 թվականներին փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվություններով ներկայացված աշխատանքների մոնիթորինգ, որի շրջանակում 2021 թվականի հաշվետվությունից առանձնացվել են 110 կՎ լարման ենթակայաններում իրականացված վերազինման աշխատանքները և համադրվել են հանձնաժողով ներկայացված՝ 2024 և 2025 թվականների սպառողների էլեկտրամատակարարման ընդհատումների վերաբերյալ տեղեկատվությունների հետ, այցելություններ են կատարվել Երևան քաղաքում, Կոտայքի, Արագածոտնի և Արմավիրի մարզերում գտնվող տարբեր էլեկտրատեղակայանքներ, ակնադիտական զննությամբ ուսումնասիրվել են կատարված աշխատանքները, տեղակայված սարքավորումները համադրվել են ընկերության կողմից ներդրումների մասին հանձնաժողով ներկայացված հաշվետվությունների մեջ առկա տվյալների հետ, ստուգվել են նաև դրանց մակնշումները և գույքահամարները, ուսումնասիրվել են ընտրված աշխատանքների՝ ընկերության կողմից տրամադրված

նախագծանախահաշվային, կատարողական և այլ փաստաթղթերը և համադրվել են փաստացի առկա իրավիճակի հետ:

Վերը նշված ուղղություններով իրականացված մոնիթորինգի արձանագրումների, ինչպես նաև վարչական վարույթի շրջանակում ձեռք բերված փաստական հանգամանքների արդյունքում հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 17-ի N377-Ա որոշմամբ դադարեցվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման թիվ 0092 լիցենզիայի գործողությունը՝ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու միջոցով:

2025 թվականի ընթացքում սպառողների կողմից հանձնաժողով հասցեագրված՝ ջրամատակարարման գրաֆիկների խախտման վերաբերյալ դիմում-բողոքների քննարկման շրջանակում հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի աշխատակիցների հետ համատեղ ուսումնասիրության նպատակով կատարվել են շրջայցեր «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության սպասարկման տարածքներում, ինչպես նաև հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի N378-Ն որոշմամբ սահմանված՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների 136-րդ կետի պահանջների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով ընկերության նկատմամբ 2025 թվականի օգոստոսի 21-ին հարուցել է վարչական վարույթ: Վարույթի շրջանակում փաստվել է, որ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը խախտել է կանոնների 136-րդ կետի պահանջը, որի համաձայն՝ հրապարակված ջրամատակարարման գրաֆիկը պետք է ներառի բաժանորդին ջրամատակարարմամբ ապահովելու երաշխավորված ժամանակահատվածը և, մինչև 17 ժամ տևողությամբ ջրամատակարարում ունեցող բաժանորդի ջրամատակարարումը պետք է իրականացվի ժամը 7<sup>00</sup>-24<sup>00</sup>-ն ընկած ժամանակահատվածում: Վարչական վարույթի արդյունքում «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ կիրառվել է տուգանք՝ 10,0 միլիոն դրամ գումարի չափով:

Միաժամանակ, 2025 թվականի ընթացքում հանձնաժողովի աշխատակազմի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ հանձնաժողովի թվով 21 գրություններով ներկայացված հարցումներին «Վեոլիա Ջուր»

փակ բաժնետիրական ընկերությունը պատասխանել է սահմանված ժամկետների հնարավոր խախտմամբ, ինչի հիման վրա, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների 164-րդ կետով սահմանված պահանջների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով ընկերության նկատմամբ 2025 թվականի օգոստոսի 21-ին հարուցվել է մեկ այլ վարչական վարույթ: Վարույթի շրջանակում փաստվել է, որ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը խախտել է կանոնների 164-րդ կետով սահմանված պահանջը, որի համաձայն՝ մատակարարը պարտավոր է դիմող անձի կամ բաժանորդի դիմումի վերաբերյալ հանձնաժողովի հարցմանը պատասխանել տասն աշխատանքային օրվա ընթացքում, եթե հարցմամբ այլ ժամկետ նախատեսված չէ: Նշված վարչական վարույթի արդյունքում ևս «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ կիրառվել է տուգանք՝ 10,0 միլիոն դրամ գումարի չափով:

Մատուցվող ծառայությունների՝ սպասարկման որակի ցուցանիշների նկատմամբ հանձնաժողովի կողմից իրականացվող մշտական դիտարկման արդյունքները հնարավորություն են տալիս կատարել արձանագրված թերությունների համակողմանի և խորքային վերլուծություն՝ վեր հանելով դրանց հիմքում ընկած իրական պատճառները և խորամուխ լինելով դրանց առավել արդյունավետ կարգավորմանն ուղղված լուծումների որդեգրմանը: Նշված լուծումները դառնում են համապատասխան ծառայության մատակարարման և օգտագործման կանոնների լրամշակման առարկա՝ անհրաժեշտ ազդակներ հաղորդելով տվյալ ոլորտի ներդրումային ծրագրերում համապատասխան ուղղությունների նախատեսման համար:

Սպառողներին մատուցվող ծառայությունների՝ սպասարկման որակի պահանջների խախտման համար 2025 թվականի ընթացքում մատակարար կազմակերպությունները բաժանորդներին վճարել են դրամային հատուցումներ՝ էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոններով, էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոններով, բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններով, ինչպես նաև խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններով սահմանված կարգով, ընդհանուր՝ 385.02 միլիոն դրամի չափով: Մասնավորապես՝

- էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոններով, ինչպես նաև էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոններով սահմանված պահանջները խախտելու համար «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը թվով 190 152 բաժանորդների վճարել է 382.86 միլիոն դրամ,
- խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններով սահմանված պահանջները խախտելու համար «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը թվով 1 454 բաժանորդների վճարել է 2.16 միլիոն դրամ:

Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունները եռամսյակային արդյունքներով հրապարակվում են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:


## **7. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը**

Հանձնաժողովն իր և իր կողմից կարգավորվող գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովում է զանգվածային լրատվամիջոցների, պաշտոնական ինտերնետային կայքի, սոցիալական ցանցերի հարթակների և այլ միջոցներով: Այս ուղղությամբ հանձնաժողովի ձեռնարկած քայլերը կրում են հետևողական բնույթ և միտված են հանրության շրջանում կառույցի դերի վերաբերյալ տեղեկատվության ընդլայնմանը և վերջինիս նկատմամբ վստահության բարձրացմանը: Մասնավորապես.

- հանձնաժողովը, որպես կոլեգիալ ինքնավար մարմին, օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում ընդունում է որոշումներ՝ դռնբաց նիստերի միջոցով: 2025 թվականին հրավիրվել է հանձնաժողովի 55 նիստ և ընդունվել 468 որոշում: Այդ առումով, հանձնաժողովը, իր սահմանած կարգի համաձայն, հայտարարում է հանձնաժողովի նիստերի անցկացման վայրը, օրը և ժամը, հնարավորություն է ընձեռում շահագրգիռ անձանց ու հանրության ներկայացուցիչներին մասնակցելու նիստերին՝ իր վարչական շենքի հնարավորությունների սահմաններում, ստանալու օրակարգ և քննարկվող նյութերը, ներկայացնելու տեղեկություններ և հանդես գալու

ելույթներով և առաջարկություններով.

- հանձնաժողովի կայքում գործել է «www.e-request.am» էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը, ինչը հնարավորություն է տվել քաղաքացիներին առցանց եղանակով ներկայացնել դիմում, հարցում կամ բողոք և նույնպես առցանց ստանալ պատասխանը.
- հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքը պարբերաբար թարմացվել է՝ հնարավորություն ընձեռելով զանգվածային լրատվամիջոցներին, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններին և ցանկացած շահագրգիռ անձի իրազեկվել հանձնաժողովի գործունեության, հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման ներկա գործընթացների, ծառայությունների սպասարկման որակի, մատակարար-սպառող փոխհարաբերությունների և այլնի մասին.
- հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում, ֆեյսբուքյան էջում և զանգվածային լրատվամիջոցներում պարբերաբար հրապարակվել են հանրային ծառայությունների ոլորտի մատակարար-սպառող հարաբերություններին և սպառողների իրազեկվածությանն առնչվող տեղեկատվական նյութեր.
- հանձնաժողովի հաղորդակցության գործառույթներն արդյունավետ իրականացնելու նպատակով 2025 թվականին շարունակվել են հրապարակումներն ինտերնետային սոցիալական ցանցերում, որոնց միջոցով ևս իրականացվում են հանձնաժողովի գործառույթներին առնչվող հանրային իրազեկման աշխատանքները.
- հաշվի առնելով հանրության առջև հաշվետու լինելու՝ օրենքի պահանջը, ինչպես յուրաքանչյուր տարի, 2025 թվականին ևս, հանձնաժողովն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել է նախորդ տարվա իր գործունեության հաշվետվությունը: Միաժամանակ, իր հաջորդ տարվա գործունեության ծրագրի նախագիծը հանրային քննարկման ներկայացնելու և ողջամիտ առաջարկությունները ծրագրում ներառելու նպատակով հանձնաժողովն այն հրապարակել է իր պաշտոնական ինտերնետային կայքում, քննարկել հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերությունների և սպառողների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ.



- շարունակվել է արդյունավետ համագործակցությունը սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ: Մասնավորապես, 2025 թվականին հանձնաժողովի հետ համագործակցել են «Սպառողների ասոցիացիա», «Սպառողների խորհրդատվության կենտրոն», «Սպառողների աջակցման կենտրոն» և «Բնակարանային կոմունալ ոլորտի աշխատողների միավորում» հասարակական կազմակերպությունները: Ակտիվորեն ներգրավված լինելով հանձնաժողովի կողմից իրականացվող՝ հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթացներում, հասարակական կազմակերպություններն իրենց հերթին, սպառողների հետ տարվող աշխատանքների շրջանակում, իրականացրել են հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների և մատակարար-սպառող կարգավորվող իրավահարաբերություններին առնչվող հանրային իրազեկման աշխատանքներ.
- հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում եռամսյակային արդյունքներով հրապարակվել է 2025 թվականի աշխատանքային ծրագրով նախատեսված և կատարվելիք աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը.
- 2025 թվականին հանձնաժողովի անդամները և մասնագետները հանրային հնչեղություն ունեցող խնդիրների շուրջ պարբերաբար հանդես են եկել ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով:

## **8. Միջազգային համագործակցություն**

Հանձնաժողովը մշտապես համագործակցում է միջազգային կազմակերպությունների և այլ երկրների կարգավորող մարմինների հետ:

Մասնավորապես, հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում միջազգային լավագույն փորձն ուսումնասիրելու և Հայաստանի Հանրապետությունում այն կիրառելու կամ կիրառման հնարավորությունները դիտարկելու նպատակով հանձնաժողովը 2025 թվականի ընթացքում համագործակցել է Համաշխարհային բանկի (WB), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD), Ասիական զարգացման բանկի (ADB), Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհրդի (CEER), Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU), ԵՄ համապատասխան

կառույցների, մասնավորապես՝ ԵՄ-ն հանուն էներգետիկայի (EU4Energy) և ԵՄ-ն հանուն թվային օրակարգի (EU4Digital), ԵՄ արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող մարմինների ցանցի (EaPeReg), էներգետիկ համայնքի (Energy Community), էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA), Ջրի եվրոպական կարգավորողների կազմակերպության (WAREG) հետ: Նշված կազմակերպությունների կողմից պարբերաբար կազմակերպվել են սեմինարներ տարբեր երկրների կարգավորողների համար էներգետիկ շուկաների ազատականացման, բաշխման և հաղորդման ցանցերի ցանցային կանոնների մշակման, ցանցերի հուսալիության և անվտանգության, ներառյալ՝ կիբերանվտանգության, վերականգնվող ռեսուրսներից էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի զարգացման, ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) կարգավորման քաղաքականության, լայնաշերտ ինտերնետ հասանելիության զարգացման, դրա քարտեզագրման, 5G տեխնոլոգիայի ներդրման, էլեկտրոնային հաղորդակցության շուկաների վերլուծության վերաբերյալ, որը հնարավորություն է տալիս հանձնաժողովին ուսումնասիրել միջազգային լավագույն փորձը և ստանալ համապատասխան տեղեկատվություն:



Հանձնաժողովը, հանդիսանալով էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA), ԵՄ արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող մարմինների ցանցի (EaPeReg) և Ջրի եվրոպական կարգավորողների կազմակերպության (WAREG) անդամ, մասնակցում է նշված կազմակերպությունների տարեկան ընդհանուր ժողովներին, ինչպես նաև վերջիններիս կողմից ստեղծված համապատասխան կոմիտեների և աշխատանքային խմբերի նիստերին:



Հանձնաժողովը մասնակցել է Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհրդի (CEER) կողմից կազմակերպվող խոցելի սպառողների շահերի պաշտպանությանը, միջազգային համագործակցությանը և ծրագրերի կառավարմանն ուղղված աշխատանքներին՝ «Արևելյան գործընկերության երկրներում մաքուր էներգիայի անցման խթանում» EU4Energy-ի ծրագրի շրջանակում:



2025 թվականին հանձնաժողովը, որպես ԵՄ արևելյան գործընկերության էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող մարմինների ցանցում (EaPeReg) գործող ռոումինգի հարցերով աշխատանքային խմբի (REWG) նախագահող, շարունակել է համագործակցությունը ԵՄ-ն հանուն թվային օրակարգի փորձագետների հետ ռոումինգի տարածաշրջային համաձայնագրի քննարկման և հետագայում դրա ստորագրման գործընթացի համակարգման աշխատանքներին: 2025 թվականին, ի հավելումն ռոումինգի տարածաշրջային համաձայնագրի, խմբի անդամները՝ EU4Digital նախաձեռնության փորձագետների հետ, ամփոփել են ԵՄ ԱԳ երկրների ձայնային զանգերի վերջնավորման մեծածախ շուկայի վերլուծությունը, որի հաշվետվությունը քննարկվել է հանձնաժողովի կողմից կազմակերպված խմբի հանդիպման ընթացքում և հրապարակվել է EU4Digital նախաձեռնության պաշտոնական կայքում:

2025 թվականին հանձնաժողովը ստանձնել է նաև ԵՄ արևելյան գործընկերության երկրների հեռահաղորդակցության ոլորտի կարգավորողների ցանցի շրջանակում գործող կարգավորողների անկախության և լայնաշերտի հարցերով աշխատանքային խմբի (IRB EWG) նախագահությունը (2019 թվականից հանձնաժողովը հանդիսացել է նշված խմբի համանախագահող), որի մասով

Ernst&Young (E&Y) խորհրդատվական ընկերության հետ՝ EU4Digital նախաձեռնության շրջանակում, ամփոփվել են ԱԳ երկրներում լայնաշերտ ինտերնետ հասանելիության զարգացման մշտադիտարկման, լայնաշերտ ինտերնետ հասանելիության շուկայի վերլուծության հաշվետվությունները և շարունակվել են կարգավորող մարմինների անկախության ամրապնդմանն ուղղված աշխատանքները:



Շարունակվել են նաև պետական այլ մարմինների հետ համատեղ աշխատանքները «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և աստոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (ՀԳՀՄ/CEPA)» նախատեսված հանձնառությունների կիրարկման ճանապարհային քարտեզում ներառված միջոցառումների իրականացմանն ուղղությամբ:



When Balance is Achieved

2025 թվականին շարունակվել է համագործակցությունը Վրաստանի էներգետիկայի կարգավորող ազգային հանձնաժողովի հետ կնքված հուշագրի շրջանակում, ինչպես նաև 2025 թվականին Հայաստանի և Վրաստանի միջև ձեռք բերված մի շարք պայմանավորվածությունների շուրջ, որի արդյունքում խորացվել է համագործակցությունը տարածաշրջանային էներգետիկ շուկաների զարգացման և անդրսահմանային առևտրի խթանման, էներգետիկ շուկաների ազատականացման ոլորտում լավագույն փորձի փոխանակմանն ուղղությամբ:



Հանձնաժողովը, հանդիսանալով Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի «Բնական մենաշնորհների սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների և կանոնների մասին արձանագրության» («Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի» 20-րդ հավելված) շրջանակում նախատեսված աշխատանքների իրականացման համար Հայաստանի Հանրապետության կողմից լիազորված մարմին, շարունակել է մասնակցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի բնական մենաշնորհների գծով խորհրդատվական կոմիտեի և աշխատանքային խմբի նիստերին:

Համագործակցելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ՝ հանձնաժողովը շարունակել է համագործակցությունը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համապատասխան կառույցների հետ՝ Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական և գազի ընդհանուր շուկաների ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքներում: Մասնավորապես, հանձնաժողովը մասնակցել է ԵԱՏՄ գազի և էլեկտրաէներգիայի ընդհանուր շուկաների ձևավորման համար պահանջվող փաստաթղթերի նախագծերի մշակմանը, ԵԱՏՄ էլեկտրաէներգետիկայի խորհրդատվական կոմիտեի, նավթի և գազի խորհրդատվական կոմիտեի, ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման ենթակոմիտեի, ինչպես նաև ԵԱՏՄ գազի ընդհանուր շուկայի ձևավորման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի նիստերին:

Զուգահեռ, 2025 թվականին հանձնաժողովը շարունակել է աշխատանքները ԵԱՏՄ անդամ պետությունների կապի ոլորտում մրցակցության և խոչընդոտների վերացման հարցերով աշխատանքային խմբի և ԵԱՏՄ անդամ պետությունների օպերատորների էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում միջազգային տրաֆիկի փոխանցումների ժամանակ խարդախությունների կանխարգելման հարցերով աշխատանքային ենթախմբի շրջանակում, ինչպես նաև մասնակցել է ԵԱՏՄ անդամ

պետությունների կապի օպերատորների միջև տրաֆիկի անցման ծառայությունների գնագոյացման կարգավորման վերաբերյալ միջազգային տեսակոնֆերանսներին և քննարկումներին:

## 9. Հանձնաժողովի ֆինանսավորում և պետական բյուջեի մուտքեր

Հանձնաժողովի տարեկան բյուջեն ձևավորվում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգավորումներին համապատասխան:

Հանձնաժողովի բյուջետային մուտքերը ձևավորվում են հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող և ծառայություն մատուցող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներից: Կարգավորման պարտադիր վճարների հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, վճարողների շրջանակը և վճարման կարգը սահմանված են «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքով:


Նետևաբար, հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման և դրանց ծախսման հետ կապված հարաբերությունները, բյուջետային մուտքերի և ելքերի մասով, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի վրա թողնում են չեզոք ազդեցություն:

2025 թվականին հանձնաժողովի բյուջեն կազմել է 1191.2 միլիոն դրամ, որից փաստացի ծախսվել է 1102.7 միլիոն դրամը, իսկ տարբերությունը՝ 88.5 միլիոն դրամի չափով, վերադարձվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

հանձնաժողովի բյուջետային մուտքեր  
(կարգավորման պարտադիր վճարներ)



Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանձնաժողովի յուրաքանչյուր տարվա բյուջեի մեկ տոկոսի չափով հաշվարկված գումարն ուղղվում է հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող, օրենսդրությանը համապատասխան գրանցված հասարակական կազմակերպություններին՝ վերջիններիս կարողությունների զարգացման և նրանց անդամների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով: Հասարակական կազմակերպությունների ընտրության, գումարի տրամադրման կարգն ու պայմանները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N1721-Ն որոշմամբ: Հետևաբար, 2025 թվականին ևս, հանձնաժողովի տարեկան բյուջեի մեկ տոկոսի չափով հաշվարկված գումարն ուղղվել է սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններին:



2025 թվականի ընթացքում հանձնաժողովի կարգավորման դաշտում գործող ընկերությունները զգալի մուտքեր են ապահովել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ լիցենզիաների տուրքերի, ռադիոհաճախականությունների

տրամադրման և օգտագործման վճարների, հանձնաժողովի կիրառած տույժերի, ինչպես նաև նոր էլեկտրակայանները լիցենզիաներով ամրագրված ժամանակահատվածում չգործարկելու, լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար ներկայացված ֆինանսական երաշխիքներից գանձվող գումարների տեսքով: Նշված աղբյուրներից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցվել է շուրջ 10.318 միլիարդ դրամ, որի հիմնական մասը՝ շուրջ 9.709 միլիարդ դրամը, կազմել են ռադիոհաճախականությունների օգտագործման և թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը:

Վերը նշված ցուցանիշներում ներառված են նաև հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող անձանցից գանձված լիցենզիայի տուրքերը՝ 382.3 միլիոն դրամի չափով, ինչպես նաև հանձնաժողովի իրավական ակտերը խախտելու համար կարգավորվող անձանց կողմից 2025 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված գումարները՝ 227.4 միլիոն դրամի չափով: